ԷՋՄԻԱԾԻՆ

ПА-1016

ՌՆԸ
ԺԶ ՏԱՐԻ

Յունուար

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ա

1959

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց նորընտիր առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսին 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հունաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ արժանաշնորհ Տ. Արմենակ-Մեսրոպ քահանա Տեր-Հակոբյանին 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Անցնող տարին 7

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճեռագիրը ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովին՝ արևի սովետական արհեստական առաջին մոլորակի արձակման առթիվ . . 9

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը Հայկական ՍՍՌ-ն Լենինի շքանշանով պարգևատրելու մասին . . 10

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճեռագիրը Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ Անտոն Քոչինյանին՝ Հայկական ՍՍՌ-ի Լենինի շքանշանով պարգևատրման առթիվ 11

Ամենորի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և պետական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի ճեռագրերը . 12

Ամանորի և Սուրբ Մեսրոպյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և բոլոր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի ճեռագրերն ու գրությունները 15

Ամանորի և Սուրբ Մեսրոպյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի ճեռագրերն ու գրությունները 20

Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի պատգամավորական ժողովի ճեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Նորին Սուրբ Օծության պատասխանը 22

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մեսրոպյան տոնի առթիվ Մայր Տաճարում 23

Գերագույն Հոգևոր Խորհրդի պատասխանը Սպահանի հայոց թեմական խորհրդի նամակին 27

Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից 29

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 31

Հոբելյանական նվերներ Վեհափառ Հայրապետին 33

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ— Սուրբ Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում 37

Ամանորի հանդեսը Հոգևոր ճեմարանում 40

Վեհափառ Հայրապետի հոբելյանը Սիդնուոռում 43

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ— Հովհաննես Սարկավագ Իմաստասերի փիլիսոփայական և բարոյագիտական հայացքները 46

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՀՈՒԴՅԱՆ— Գայուստ Տեր-Մկրտչյան (Միաբան) 54

Ս. Ս.— Հավատոտ լուրեր Մայր Հայրենիքից 59

Ակադեմիկոս Լևոն Աբգարի Օրբելի 61

Հանգիստ արժանապատիվ Տ. Մատթեոս քահանա Գյուզելյանի . . 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"
Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1959 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՎԱՂԴԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՎ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԵԱՂԳԱՅԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԲՈՒՌՈՅ ԱՑՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐՈՅՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԴԵՐԱՊԱՏԻՒ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՀԱՅՈՑ, ՀԱՐԱՋԱՏԻ ՄԱՅՐ ԱԲՈՒՌՈՅ ՍՐՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Եղբայրական սիրով կողջունեմ զՁեզ և սույն կոնդակով կհաստատեմ Ձերդ Սրբության ընտրությունը իբրև թեմական առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներու հայոց, ընտրություն, որ կայացավ 16 նոյեմբեր 1958-ին:

Երկար և արդյունավետ են Ձերդ Սրբության ծառայության տարիները՝ իբրև հոգևոր վերակացու և առաջնորդ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո:

Աստուծո և մեր եկեղեցիին նվիրյալ Ձեր կյանքը և գործունեությունը, իբրև իմաստուն և բարի մշակ, հայտնի է Մեզ և ճամայն հայ հավատացյալ ժողովուրդին: Մեր եկեղեցվո եպիսկոպոսական դասուն մեջ հոգևոր և իմացական հեղինակություն մըն եք արդեն և Մենք զՁեզ կնկատենք Մեր ամենաազնիվ գործակիցներեն մին՝ Մեր աստվածասեր ու եկեղեցաշեն նպատակներու իրագործման դժվարին սակայն փառավոր ճամբուն վրա:

Եվ Մենք վստահ ենք, թե Ձեր նոր պաշտոնով, իբրև հոգևոր առաջնորդը Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեր հավատացյալ ժողովուրդին, գործակցաբար թեմական խորհուրդիդ հետ, առավել պիտի արդյունավորեք Ձեր աշխատանքը և Ձեր հոտնդը՝ ի շինություն ամերիկահայ ժողովուրդի հոգևոր կյանքին և ի մխիթարություն Մեզ:

Նույն Ձեր հավատքին հուրով, նույն սիրով դեպի մեր հավատացյալ ժողովուրդը և նույն հավատարմությամբ դեպի աստվածակառույց Ս. Էջմիածինը, շարունակեցե՛ք հարոզել Տիրոջ խոսքը, շարունակեցե՛ք սեր և խաղաղություն բաշխել բոլոր հայ հուսացյալ հոգիներուն անխտիր և շարունակեցե՛ք Ձեր ջանքերը՝ վերահաստատելու համար ներքին միությունը և համերաշխությունը ամերիկահայ հավատացյալ ժողովուրդին մեջ:

Փիտցե՛ք, սիրելի՛ Սրբազան, որ Ամերիկայի մեջ Մենք չենք հանչնար անջատյալ եկեղեցիներ: Բոլորը անխտիր Դուք եկատեցե՛ք Ձեր հարազատ զավակները, ենթակա Ձեր հոգևոր իշխանության, և անձանձրույթ կերպով սիրո հովերը կարդացե՛ք ամենուն:

Մեր պատվերն է, որ Ձեր եկեղեցիները և Ձեր հավատացյալները հեռու պահենք քաղաքական փորձություններեն, մնալով հավատարիմ Ձեր երկրի օրենքներուն և շահերուն: Միշտ հիշեցե՛ք և հիշեցուցե՛ք, թե բոլոր անունք, որ եկեղեցին քաղաքական պայքարներու թատր դարձնել կփորձեն, Աստուծո դեմ կմեղանչեն և Քրիստոսի եկեղեցին կոկորացնեն: Մեր բոլորիս սեպում պարտքն է՝ հեռու մնալ քաղաքական-ընկերային հակամարտությանց սահմաններեն, և ամեն մեկս տվյալ պայմաններուն մեջ գործելով, հառաջ տանիլ Աստուծո գործը, ամրացնելով մեր Ս. եկեղեցվո հիմքերը, պահպանելով և առավել զարգացնելով հայ հավատացյալ ժողովուրդի միասնությունը՝ հավատքի վեմ Ս. Էջմիածնով:

Մասնավոր ուշադրությամբ և հայրական գուրգուրանքով մոտեցե՛ք նոր սերունդին՝ ամերիկահայ երիտասարդներուն և պատանիներուն, դաստիարակելու համար զանոնք Ավետարանի լույսով և հայկական շունչով, որպեսզի անոնց խանդավառ հոգիները զարդարվին մաքուր հավատքով, բարոյական առաքինություններով և ազգային առողջ գիտակցությամբ՝ հայ լեզվի, հայ մշակույթի և Հայոց աշխարհի պաշտամունքով:

Անխառն սիրով կշնորհավորենք զՁեզ և կմաղթենք Ձերդ Սրբազնության քաջառողջ երկար տարիներ, ուժ և եռանդ և աստվածային օգնականություն, փայլուն կերպով արդյունավորելու համար Ձեր պաշտոնը և Ձեր աշխատանքը՝ ի փառս Աստուծո և մեր Ս. եկեղեցիին:

Արդ, սիրելի՛ Սրբազան եղբայր, «ԱՐԹՈՒՆՔ ԵՂԻՑՈ՛Ւ, ԵՒ ԶԳՆՑՑՈ՛Ւ ԶԱՐՍԱՀՍՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ԶՍԻՐՈՅ, ԵՒ ՊԻՏՑՈ՛Ւ ԶՍԱՂԱՒԱՐՍՆ ՅԻՍՈՒՅՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ» (Ա Թեսաղ. ե 8):

Կողջունենք և կօրհնենք նաև ամերիկահայ թեմական պատգամավորական ժողովը, թեմական խորհուրդը, քահանայից դասը և համայն հավատացյալ և սիրեցյալ մեր ժողովուրդը, մնալով աղոթող բոլորին արևշատության և երջանկության համար:

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՆԴ ՁԵԶ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ, ԱՄԷՆ»:

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-Զ-ն յունուարի
1959 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԸ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՄԵՆԱԿ-ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ՏԷՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՕՂՈՐՄԵՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾԼՈՅ ԵՒ ԿԱՐՕՂՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՁՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐՊՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՄԵՆԱԿ-ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅԻ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ, ՀԱՐԱՁԱՏ ՈՐՊԻՍՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, Ի ԴԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Սիրով ընդառաջելով հունահայ բեմական խորհուրդի և հավատացյալ ժողովուրդի խնդրանքին ու գնահատելով երկար տարիներու Ձեր ստվածասեր գործունեությունը իբրև հոգևոր հովիվ հունահայ ժողովուրդի, այլև նկատի ունենալով Ձեր եկեղեցաշեն հավատարմությունը դեպի մեր Հայաստանյայց եկեղեցվո կանոնները և ավանդությունները, Ձեզ կլիազորենք առաջնորդելու հունահայ ամբողջ հավատացյալ ժողովուրդը անխտիր, իբրև բեմական առաջնորդի տեղապահ, գործակցաբար բեմական խորհուրդի հետ, համաձայն մեր Ս. եկեղեցվո կարգերուն և կանոններուն և համաձայն Ձեր երկրի՝ բարեխնամ Հունաստանի պետական օրենքներուն:

Միաժամանակ Ձեզ կշնորհենք լանջախաչ կրելու իրավունք՝ ի մխիթարություն Ձեր հավատացյալ հոտի և ի հաճելիություն Ձեզ:

Ձեզ վստահելով հունահայ բոլոր հայ եկեղեցիներու և հավատացյալներու հոգևոր ղեկավարությունը, կհորդորենք Ձեզ, որ ավետարանական ոգիով սեր և խաղաղություն քարոզեք ամենուն և վերահաստատեք միությունը ժողովուրդի ծոցին մեջ Ձեր օրինավոր իշխանության ներքև, հետու պահելով հայ հավատացյալները հերձվածող, եկեղեցահանդ ձեռքերե, որոնք ոչ մեկ հոգևոր իշխանություն չունին Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ եկեղեցվո և անոր հավատացյալ ժողովուրդին վրա:

Ձեզ պատվեր կուտանք նաև, որ մեր Ս. Եկեղեցին հեռու պահեք քաղաքական-կուսակցական փոռձությունններե, մնալով հավատարիմ Ձեր հյուրընկալ Հայրենիքին, ուիրախնամ Հելլադայի օրենքներուն և շահերուն: Ձեր պարտքը նկատեցեք մեր ժողովուրդին քարոզել՝ որպեսզի անոնք բոլորը ըլլան օրինապահ, պարկեշտ ու շինարար քաղաքացիները իրենց բնակած երկրին:

Ձեզ ամբողջապես հաջողություն մաղթելով Ձեր նոր պաշտոնին ու սուրբ գործին մեջ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, Ձեզ և թեմական խորհուրդին, քահանայից դասուն և համայն հունահայ ժողովուրդին կհղեմ Մեր սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը:

«ՈՂՋ ԼԵՐՈՒՔ, ՁՕՐԱՑԵԱԼ Ս. ՀՈԳԻՈՎ ԵՒ ՕՐՀՆԵԱԼ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ Ի ՄԷՆՋ, ԱՄԷՆ:

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-7-ն յունուարի
1959 Թրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ԹՆԸ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆՑՆՈՂ ՏԱՐԻՆ

Պատմության գիրկն է անցել 1958 թվականը, ողջ աշխարհի և մարդկության համար իրադարձություններով հարուստ մի տարի: Եվ անա նորը՝ 1959 թվականը, որպես կյանքի սպիտակ մատյան, որի առաջ կանգնել ենք մեր խոհերով, երազանքներով, գործունեության և աշխատանքի նոր եռանդով:

Ամանորի հանդիսությունների և խոհերի մեջ կա շունչը Աստուծո, հավիտենականության, հավերժին:

Հին տարվա մայրամուտին և ամանորի արշալույսին, մարդկությունը, մի պահ մոռացության տված առօրյա հոգսերը, մերթ թախիծով, մերթ խինդով մտածում է գալիք արևոտ օրերի մասին, նայում է անվերադարձ ԱՆՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԻՆ, որն իր հետ ՀԱՎԵՐԺԻ գիրկն է տանում մարդկանց շատերի ցավերն ու վշտերը, երազները ու իղձերը, ինչպես նաև ուրիշների երջանկությունն ու բախտավորությունը:

Աշխարհը իր տագնապների և հոգսերի մեջ, իր հույսերի և երազանքների մեջ, միշտ մտածել է խաղաղության և երջանկության մասին, հավատացել է արևոտ ու պայծառ ԳԱԼԻՔ ՕՐԵՐԻՆ:

Վաղվա նկատմամբ վառ հույսի, անկոտրում հավատի մեջ է, որ աշխարհը ավելի է գեղեցկանում և զգացվում է կյանքի վեհությունն ու նպատակասլացությունը, կյանքի երաժշտությունն ու հավիտենականությունը, հավերժի բերկրանքը:

Ի՞նչ է հավերժը: Ս. Օգոստիանոս, եկեղեցու այդ նշանավոր հայրը և անտիկ աշխարհի այդ փիլիսոփան, սահմանում է հավերժը որպես «ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՅԱԼԻ, ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԵՐԿԱՅԻ, ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱԳԱՅԻ»:

Ժամանակը իր ստորաբաժանումներով՝ տարի, ամիս, օր, վայրկյան՝ հավիտենական է ու անփոփոխ: Հավիտենականության խորհուրդն ենք զգում ժամանակի մեջ: ՄԱՐԴՆ է, ՈՐ ԼՈԿ ԳՆՈՒՄ, ԱՆՑՆՈՒՄ է ԵՎ ՓՈՓՈԽՎՈՒՄ: Մարդու կյանքի օրերը, ամիսներն ու տարիները՝ «ընդ առաւօտս որպէս դալարի զուարճասցին, ընդ երեկոյս թառամեսցին, չորասցին և անկցին» (Սաղմ. ՁԹ 6—7): Ժամանակի մեջ տեղ են գտնում մարդու կյանքի եղելությունները, որոնք փոխվում են ու անցնում, մինչ ժամանակը մնում է անսկիզբ և անվախճան, նույն և հավիտենական, սառը, անտարբեր մեր հուզումներին, խոհերին, վշտին և ուրախությանը:

Հունվարի առաջին օրը, որպես ժամանակի միավոր և հասկացություն, նույնն է տարվա բոլոր օրերի հետ: Մարդու մեջ շարունակվում է ժամանակի հավերժական լինելության հոսանքը:

Մարդու գերագույն կոչումն է հավերժական այդ ժամանակը լցնել ազնիվ գործերով, աշխատանքով, և տեղ գտավել ժամանակի մեջ, և տարին գեթ մի օր, ԺԱՄԱՆԱԿԻ ՏՈՆԻՆ, նոր տարվա առթիվ, հանդիսավորի քերել իր աշխատանքի պտուղները, կյանքում ձեռք բերած հաջողություններն ու կրած հուսախաբությունները:

Այսպիսի սրտագին խոհերով ու զգացումներով, ինչպես նաև քրիստոնեական վառ հավատով, հայ ժողովուրդը, բե՛ Մայր Հայ-

բենիմում և բ՝ Սփյուռքում, դիմավորում է իր նոր տարին և Փրկչի Ս. Մեռնդը:

Անցնող տարին, հայ ժողովրդի և Հայ եկեղեցու համար, աշխատանքով, պայքարով ու հաղթանակով հարուստ մի տարի հանդիսացավ:

Ազգային-եկեղեցական տեսակետից 1958 թվականը հիշատակելի տարի հանդիսացավ մեր եկեղեցական տարեգրության մեջ նրանով, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, շարունակեց իր նախախնամական դերը մեր ժողովրդի քրիստոնեական և հոգևոր մխիթարության, դաստիարակության գործում, և միասնական ջանքերով դուրս եկավ Սփյուռքում բոլոր այն տխուր երևույթների դեմ, որոնց նպատակն էր քայքայել մեր եկեղեցական միությունն ու ազգային միասնականությունը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար հատկանշական էր 1958 թվականը նաև նրանով, որ անցնող տարվա հոկտեմբեր ամսվա մեջ, Մայր Աթոռում և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիներում, տոնվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի ծննդյան 50-ամյա և գահակալության երորդ տարեդարձի հոբելյանը, որը վերածվեց հայ հավատացյալ ժողովրդի, Հայ Եկեղեցու միության անխզելի տոնի, և հանդիսացավ հայ ժողովրդի սիրո և երախտագիտության վառ ապացույցը դեպի իր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և դեպի նրա տնօրեն Գահակալը:

Անցնող տարին ազնիվ հպարտության զգացումներով լցրեց ճշմարտապես հայրենասեր յուրաքանչյուր հայ մարդու սիրտը: Հայ ժողովուրդը, իր Հայրենի օրրազան հողի վրա, իր պետականության ազատ պայմաններում, ստեղծագործ և խաղաղ աշխատանքով դիմավորեց 1959 թվականը: 1958 թվականին իրապես մեծ ու անմոռանալի եղան մեր Հայրենիքի ու խաղաղասեր մեր ժողովրդի ձեռք բերած հաջողություններն ու նվաճումները գյուղատնտեսության, գիտության, շինարարության բնագավառներում:

Նոր տարվա նախօրյակին Հայկական Ռեսպուբլիկան, գյուղատնտեսության մեջ ձեռք բերած նվաճումների համար, պարգևատրվեց Լենինի շքանշանով, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության 1958 թվականի դեկտեմբերի 29 թվակիր հրամանագրով: Պետական այդ բարձր պարգևը աշխատանքային նոր ոգևորությամբ է լցրել բոլորի սրտերը: Ձեռք բերված և բերվող այդ հաջողությունները է՛լ ավելի կամրապնդեն մեր Հայրենիքի ու ժողովրդի տնտեսական և բարոյական հզորությունը: Սակայն առավել հոյակապ են 1959 թվականի և հաջորդ տարիների հայ ժողովրդի առաջ կանգնած նեռանկարները, որոնք գալիք օրերի հետ փառաշուք իրագործումներ են դառնալու մեր ժողովրդի սխրալի աշխատանքներով և ջանքերով:

Հայ ժողովուրդը, մեր Հայրենիքը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, նոր տարվա շեմքին, ավելի քան երբեք հզոր, հավատով լի, կանգնել են իրենց լուսավոր ապագայի հանդեպ խանդավառող, հայրենասիրությունը, եկեղեցասիրության հեռանկարների առաջ:

Թո՛ղ 1959 թվականը լինի բովանդակ աշխարհի և հայ ժողովրդի համար մանավանդ խաղաղության, հայրենաշինության, միասնականության տարի:

Թո՛ղ 1959 թվականը լինի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար հոգևոր նոր վերազարթոնքի, խաղաղ և հոգեշունչ աշխատանքի և ազգային եկեղեցական միասնականության տարի:

Ազգիս Վեհափառ Հայրապետի մաղթանքն է և սրտագին ցանկությունը նոր տարվա սեմին և Քրիստոսի հրաշափառ Ծննդյան տոնին, որ 1959 թվականը, «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՁՈՐՈՒԹՅԱՄԲ, ԸՆԼԱ ԵԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ, ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ, ԵՎ ՄԵՐ ԱԶԳԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԻԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՏԱՐԻ՝ Ի ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՄԵՋ ԱՄԵՆՈՒՍ»:

Եղիցի, եղիցի և եղիցի:

ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՆՈՐ ՏԱՐԻ:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱ՛Վ ԵՎ ՀԱՅՏՆԵՑԱՎ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ՝ ԱՐԵՎԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄՈԼՈՐԱԿԻ ԱՐՁԱԿՄԱՆ ԱՌԻԹԻՎ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՆԻԿԻՏԱ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ

ՄՈՍԿՎԱ

Խոր ճիացումով ողջունում ենք սովետական գիտության նորագույն մեծ հաղթանակը, որով արեգակնային համակարգը օժտվեց արհեստական մի նոր մոլորակով:

Պատմական այս սքանչելի նվաճման առիթով, թույլ տվեք սրտագին շնորհավորանք ուղղել Ձեզ Գերազանցության և մոլորակի հեղինակ գիտնականներին ու կառուցողներին:

Սովետական գիտության այս մեծ հաղթանակը Մենք նկատում ենք նաև փառավոր հաղթանակ՝ գիտությունը մարդկության բարօրության և աշխարհի խաղաղության ծառայեցնելու վեհ գաղափարին:

Ի սրտե մաղթում ենք մեր հայրենի գիտության նորանոր հաջողություններ՝ ի փառս սովետական հանճարի և ի բարօրություն և հերջանկություն համայն մարդկության:

Հարգանքով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ն ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԲԱՄԲԱԿԻ, ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ, ՀԱՑԱՀԱՏԻԿԻ, ՄՍԻ, ԿԱԹԻ և ԲՐԴԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԼԱՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ԳԵՐԱԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՋԵՌՔ ԲԵՌԱԾ ԽՈՇՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՍՊՈՒԲԼԻԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ:

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
Կ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ
1958 թ. դեկտեմբերի 29

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ԱԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՏԻՍՐ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ, ՊԱՏՎԱՐԺԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՇՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի՝ Լենինի բարձրագույն շքանշանով պարգևատրվելու երջանիկ առթիվ, հաճեցեք ընդունել Մայր Արոռ Ս. Էջմիածնի և Մեր հայրական ամենաջերմ ողջույնը և սրտագին շնորհավորությունը: Հայաստանյայց եկեղեցին, իր հոգևոր պաշտոնեությամբ և հավատացյալներով, ոգևորությամբ և հպարտությամբ կմիանա այն մեծ խնդության, որ համակած է այս օրերին համայն հայ ժողովուրդը:

Սովետական Միության Գերագույն Սովետի Նախագահության կողմից շնորհված այս մեծ պարգևը պատմական մի ապացույց է այն բանի, որ անցյալում թշվառ ու անտեր և տնտեսապես քայքայված Հայաստանը, այսօր վերածնված ու վերաշինված իբրև ազգային պետություն, գտնվում է վերելքի և ծաղկման ճանապարհի վրա, աշխատանքի ու ստեղծագործության բոլոր ասպարեզներում, սովետական ժողովուրդների եղբայրական հզոր ընտանիքում, ապահով ու խաղաղ:

Թո՛ղ շեն մնա մեր երկիրը ու է՛լ ավելի զորանա, առաջադիմե և բարգավանի՝ ի. պատիվ իր հայրենասեր պետական ղեկավարների և մասնագետների և ի փառս աշխատասեր ու ստեղծարար հայ ժողովրդի:

Ողջունիվ և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Է. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԵՐԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Մեծարգո պր. նախագահ.

Նոր տարվա առթիվ հաճեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները: Թող Ամենակալ Աստված պահի ու պահպանի սովետական ժողովուրդը խաղաղությամբ և բարեբերությամբ, այլև պարգևի նորանոր հաջողություններ ու ծաղկում Սովետական մեծ Միությանը:

Ողջունիվ և հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ հաճեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները ու բարի մաղթանքները Ձեր բարեհաջողության և հայրենանվեր գործոց հաջողության համար: Աղոթող ենք առ Աստված՝ մեր սիրելի Հայրենիքի և Սովետական Միության հետագա վերելքի ու ծաղկման, հայ և սովետական բոլոր ժողովուրդների բարեբերության և խաղաղության համար:

Ձեզ հռանդ, կորով և երջանիկ երկար կյանք:

Խորին հարգանքով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՑԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները և ջերմ բարեմաղթությունները նոր տարվա առթիվ: Թող 1959 թվականը լինի նոր հաջողությունների ու ծաղկման տարի Սովետական մեծ Միության և մեր սիրելի Մայր Հայրենիքի համար: Թող խաղաղությունը և մարդասիրության ոգին ամրապնդվեն ամբողջ աշխարհում՝ հերքանկություն բոլոր ժողովուրդների:

Ձեզ և Ձեր բոլոր մեծարգո գործակիցներին քաջառողջություն և հայրենանվեր շինարար գործոց լիակատար հաջողություն:

Սիրով հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ամանորի առթիվ հանեցեք ընդունել Մեր սիրալիր ողջույնը և անկեղծ շնորհավորանքները Ձեզ անձամբ և եկեղեցական գործերի խորհրդի բոլոր անդամներին: Ի սրտե մաղթում ենք, որ նոր տարին խաղաղության և նորանոր հաջողությունների ու ծաղկման տարի լինի մեր Մայր Հայրենիքի և ամբողջ Սովետական Միության համար:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՅՈՒՉՈՒԿՈՎԻՆ

ՍՈՖԻԱ

Սրտագին շնորհակալ ենք նոր տարվա Ձեր շնորհավորանքի համար: Փոխադարձաբար շնորհավորում ենք Ձեզ, մաղթելով քաջառողջություն և հաջողություն Ձեր բեղմնավոր գործունեության մեջ, իսկ բուլղար ժողովրդին՝ բարեկեցություն և հետագա ծաղկում:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ կողմից ճայտնում ենք մեր շնորհակալությունը և ճղում ենք Ձեզ փոխադարձ շնորհավորանքներ նոր տարվա առթիվ, որը կլինի մեր Հայրենիքի հետագա բարգավաճման, ժողովուրդների բարեկամության և ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման նոր հաջողությունների տարի:

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ-ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքների և ջերմ բարեմաղթությունների համար ճայտնում ենք մեր շնորհակալությունը: Հանեցեք ընդունել նույնպես մեր շնորհավորանքները և բարեմաղթությունները Ձեր հաջողության, ամբողջ աշխարհի խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման համար:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Շնորհակալություն Ձեր բարեմաղթության համար: Փոխադարձ շնորհավորում եմ Ձեր նոր տարին:

Ա. ՊՈՒՉԻՆ
ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՈՒՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՄՈՍԿՎԱ

Շնորհակալություն Ձեզ նոր տարվա շնորհավորական հեռագրի համար: Հանեցեք ընդունել մեր փոխադարձ շնորհավորանքները նոր տարվա առթիվ և մեր անկեղծ բարեմաղթությունները Ձեր հաջողության և բարեկամության համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՈՒՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ-ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Ստալինի շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը 1959 թվականի նոր տարվա առթիվ:

ՔՐՈՒՇՉՈՒԿՈՎ
ԻՍԼԱՄԱԲԱԴԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՆԹԵՐ
ՐՈՍԿՈՍԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՍՈՖԻԱ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՊՈՒՅՐ ԵՂԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՀԵԴԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),
ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ (*ԴԱՄԱՍԿՈՍ*),
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ (*ԹԲԻԼԻՍԻ*),
ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ. ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՋԵՈՖՖՐԻԻՆ (*ԼՈՆԴՈՆ*),
ՌՈՒՄԵՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),
ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ԿԻՐԻԼԻՆ (*ՍՈՖԻԱ*),
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԿԼԻՏՈՍԻՆ (*ԱԹԵՆՔ*),
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (*ՏԱԼԼԻՆ*),
ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻՆ (*ՌԻԳԱ*),
ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՆԻԿՈԼԱՅԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐՀԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ
ԱՐԱ ՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (*ՎԵՆԵՏԻԿ*),
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ
Հ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՔՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*):

Մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան ավետիսով շնորհավորում եմք և Ձեզ, մաղթելով Ձեզ խաղաղություն երկար տարիներ, Ձեր Ս. եկեղեցու ծաղկումով ու աշխարհի խաղաղությամբ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձեր Սրբություն, սիրելյալ եղբայր ի Քրիստոս.

Եղբայրական սիրո զգացմունքով շնորհավորում եմ Քրիստոսի Մեծդյաց Փրկչական Ձեր տոնը:

Թո՛ղ Աստուծո հաճությունը լինի մեր վրա, ինչպես նաև Նրա հովանին՝ մեր կյանքի և Նրա երկնային օրհնությունը՝ մեր գործերի և ծառայությանց վրա:

Ողջունում եմ Ձեզ ասավածային բարիքներով լի առաջիկա նոր տարվա առթիվ:

Թող Տերը վերանորոգի Ձեր ֆիզիկական ուժերը և պարգևի բարի շնորհներ, որպեսզի կարողանամ շարունակել Ձեր ծառայությունը Աստուծո Տաճարում Ձեր հովվության հանձնված հոտի համար:

Հիսուս Քրիստոսի սիրով եղբայրաբար Ձեզ աձնվեր՝

ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

ՄՈՍԿՎԱ

Սրտագին շնորհակալություն: Փոխադարձաբար շնորհավորում եմ Քրիստոսի Մեծդյան տոնը: Ձեզ քաջառողջություն և արևշատություն: Աստված Ձեզ թող պահպան լինի:

Եղբայրական սիրով՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ

ԴԱՄԱՍԿՈՍ

Դարերով հաստատված և սրբագործված սովորություն է քրիստոնեական եկեղեցիների համար՝ Քրիստոսի Սնեդյան և Հարության մեծ տոներին հոգ ողջունել և այդ ողջույնները արտահայտել մեր հավատի միությունը: Քրիստոնեական խնդությամբ ողջունում, գրկում և համբուրում եմ Ձեր Սրբությանը: Շնորհավորում եմ Ձեզ և Ձեր նկեղեցու բարձրաստիճան հովիվներին. միաբանության և ասավածապաշտ Ձեր ժողովուրդին, Քրիստոսի Մեծդյան և նոր տարվա տոների առթիվ, և ցանկանում եմ Ձեզ նոր տարում երկնային և երկրավոր բոլոր բարիքները, մաղթում եմ, որ առաջիկա 1959 թվականին երկրի բոլոր ծագերում ճշի հրեշտակային երգը՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Թո՛ղ մարդացյալ Փրկչի ծննդով հաստատվի խաղաղություն աշխարհում և հաճություն մարդուց մեջ:

Սրտի խորին սիրով՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

ԹԲԻԼԻՍԻ

Սիրելյալ եղբայր ի Քրիստոս.

«Շնորհք և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»:

«Եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհեմ, և տեսցուք զինչ է բանս այս, որ եղև, զոր Տէր եցոյց մեզ» (Ղուկ. Բ 15): Հասարակ հովիվների նման, յուրաքանչյուր քրիստոնյա հոգի, Տրոջ Սնեդյան տարեկան տոնախմբության առթիվ, քայլում է այն ճանապարհով, որ առաջնորդում է դեպի «Մանուկն եղեալ ի մսուր»: Միատեղ կատարելով այս, քրիստոնյաները, մեծապես տարբերվող

ավանդություններով, ցուցաբերում են աշխարհին իրենց էական միությունը՝ նվիրվածը Հիսուս Քրիստոսին, «որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով» (Նիկիական Հանգանակ):

Հովիվներն ուղևորվեցին դեպի գոմը, որովհետև նրանք տեսան մի մեծ լույս, «և փառք Տեառն ծագեցին առ նոսա», և որովհետև նրանք լսեցին հրեշտակի պատգամը: Ինչքա՞ն կենսական է այս լույսը անհրաժեշտ է այսօրվա աշխարհին, որտեղ անվստահությունն ու կասկածը մրագնում են մարդկանց խորհուրդները և ստվեր են գցում աշխարհի ժողովուրդների վրա:

Քրիստոսի փրկելու և բժշկելու իշխանության վկայությամբ, միության խոր զգացմունքով է, որ ես շնորհավորում եմ Ձեզ, սիրելյալ եղբայր, մեր Փրկչի Մեծդյան տարեդարձի առթիվ: Աղոթենք, որ աստվածային իշխանությունը, որ գալիս է Իր Որդի բազուկների մեջ գտնվող այդ Մանուկից, հաղթանակի խավարի, ատելության և հարստահարության ուժերին:

Աղոթում ենք Ձեզ Սրբության և Ձեր հավատացյալ ժողովրդի համար, Ձեզ և նրանց ցանկանալով օրհնյալ Մեծունդ:

ՋԵՈՖՖՐԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,
ԼՈՆԴՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

Ի սրտե շնորհակալ եմ Ձեր Սրբության եղբայրական մաղթանքների համար և սիրով շնորհավորում եմ Ձեզ Տիրոջ Ս. Մեծդյան և Մկրտության առթիվ, մաղթելով, որ 1959 թվականը բերի մեր եկեղեցիների և համայն աշխարհի համար խաղաղության ամրապնդման և մարդկանց ու ժողովուրդների միջև բարի կամեցողության ուրախությունը, իսկ Ձեր Սրբության՝ հաջառող երկար տարիներ և երջանիկ իրագործումներ:

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ
ՌՈՄԻՄԻԼԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ
ՌՈՄԱՐԻՈՍ

Այս տարի Ձեզ և ի Քրիստոս եղբայր բոլորի հետ մենք մի անգամ ևս հանդիպում ենք Բեթղեհեմի համեստ այրի մուտքի մոտ, որտեղ մենք հավաքվել ենք երկրպագելու Մեծ Հովվապետ Քրիստոսին: Որքա՞ն սրբություն է արտացոլում շրջապատը, որտեղ ծնվեց մեր Փրկիչը: Նեղ է մուտքը, որը եղավ ընդունարանի Անբավելիին: Բայց նա, Անպարագրելին, տեղավորված մուտքում, լայնացրեց այն Իր անսահման և հրաշալի գործերով: Այստեղ, նրա մուտքի մոտ, տեղ ունեն բոլորը, քանի որ Մեծդյան այրը Աստուծո սիրով վերածվում է երկնքի: Ինչպիսի՞ հրաշալի խորհուրդ է Աստվածահայտնությունը: Նա լույս է, աստվածային ուրախություն, հույս է փրկությունների ժամանակ, խաղաղություն և փրկություն՝ բոլոր մարդկանց համար: Երկյուղածությամբ խոնարհենք մեր գլուխները Քրիստոսի հրաշափառ Մեծդյան առաջ և եղբայրաբար ողջագուրվենք ի Քրիստոս Հիսուս, և Ձեզ հետ միասին մեր ջերմ աղոթքները վերառաքենք աշխարհի մարդացյալ Փրկչին, հայցելով նրա երկնային օրհնությունը համայն մարդկության համար, որպեսզի Ինքը լուսավորի մեզ Իր գթառատ հայացքով և մեր խռովահույզ աշխարհում ծաղկի ցանկալի խաղաղությունը խնդության քաղցր պտուղներով, Ս. Հոգու շնորհով:

Բուլղարական Ուղղափառ եկեղեցու Ս. Սինոդի և իմ անունից հարգանքոտ ողջունում ենք Ձեզ Քրիստոսի Մեծդյան հրաշափառ տոնի առթիվ և ցանկանում ենք Ձեզ բարեբաստիկ նոր տարի, Աստուծո ողորմությամբ նոր հաջողություններ Ձեր եկեղեցուն և աշխարհում խաղաղության հաղթանակի համար:

Ձեր խոնարհ եղբայր և պաշտոնակից ի Քրիստոս՝

ԿԻՐԻԼ,
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼԳԱՐԻԱՅԻ
ՍՈՖԻԱ

ПА-1016

Հանեցիք ընդունել իմ ամենաջերմագին շնորհավորանքները մեր Փրկչի՝ Քրիստոսի Մեծդյան մեծ տոնի առթիվ, որն Իր մեծ սիրով և ողորմությամբ ճամախմբում է ողջ աշխարհը: Թող անպակաս լինի ամենակարող Աստուծո օրհնությունը Ձեր և Ձեր եկեղեցու վրա այս նոր տարում:

Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ՅԱՆ ԿԻՑՎԻՏ

ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Քրիստոնեական մեծ տոնի նախօրյակին, Հյուսիսի բնակիչների մտքերը սլանում են դեպի Հարավ, դեպի Պաղեստինի սրբազան վայրերը, դեպի Արարատը, որի գագաթին հանգչեց Նոյյան տապանը՝ փրկելով մարդկային ընտանիքը, դեպի Բեթղեհեմի մսուրը, ուր ծնավ Մանուկ Քրիստոսը՝ մարդկության Փրկիչը և խաղաղության Արարիչը: Թո՛ղ այդ սուրբ այրից սփռվի աստվածային լույսը և խաղաղությունը նոր տարում բոլոր ժողովուրդների և հնադարյան Հայ եկեղեցու, նրա Գետ Սրբազան Պատրիարք-Կաթողիկոսի և Իր հաստատի միաբանների վրա:

Փա՛ռք ամենակարող Աստուծուն, խաղաղությո՛ւն աշխարհին, բարություն՛ մարդկանց:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԼԱՏՎԻԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՌԻԳԱ

Ողջունում եմ Ձեզ և Ձեր հոտին և միաժամանակ շնորհավորում ուրախ զգացմունքով Քրիստոսի Մեծդյան մեծ տոնը և Ձեր նոր տարին:

Ամեն տարի միլիոնավոր հավատացյալ քրիստոնեական սրտեր այս տոնի օրը ոգևորվում են Բեթղեհեմում ծնված Փրկչի հիշողությամբ և նրանցի հետ երգում «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

Ամբողջ սրտով ցանկանում եմ Ձերդ Սրբության առողջություն, երկար օրեր և Աստուծո օրհնությունը Ձեր բարձր պաշտոնի մեջ, ի փառս Աստուծո, ի բարություն Քրիստոնեական եկեղեցու: Թող խաղաղություն լինի աշխարհում և մարդկանց միջև, և երկրագնդի ժողովուրդների մեջ՝ հաճություն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՆԻԿՈԼԱՅ

ԱՆԴԱՄ Ս. ՍԻՆՈԴԻ, ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄՆԱՅԻ

ՄՈՍԿՎԱ

Վեհափառ Տեր.

Հիսուսի Ս. Մենդյան և վերահաս ամանորի նախօրյակին մեզի հասավ — ի բացակայության մեր Գերապայծառ Աբբահոր—Ձեր թանկագին նամակը և մենք շտապեցինք ուրախ ենք Ձերդ Վեհափառության այս հատուկ և հայրական փափկանկատ ուշադրության արժանանալով:

Ի սրտէ շնորհակալ ենք Ձերդ Վեհափառության սիրալիր մաղթանքներուն՝ ուղղված մեր Միաբանության Գլխուն և բոլոր անդամներուն. և կրնամ վստահ ըլլալ, որ մենք ալ ջերմորեն պիտի աղոթենք և խնդրենք, որ մանկացյալն Աստված Ձեզի պարգևե առողջ, երկար և երջանիկ տարիներ բեղուն գործունեության, և կարենամ Իր լիառատ շնորհներով և լույսերով անստեղյուր առաջնորդել հայ ժողովուրդը Իր աստվածային սուրբ կամքին և թելադրությանց համեմատ, մեր սուրբ հայրերու հոգիով և անոնց գծած լուսավոր շավիղեն:

Թող Աստված Իր բարեգթությամբ շնորհե խռոված աշխարհին Բեթղեհեմի երկնակամարին վրա ավետված խաղաղությունը և հաշտությունը մարդոց մեջ, և այսպես արյունի և մարտիրոսության ծոցեն վերապրած Հայ Ազգն ու մեր սիրելի Հայրենիքը տեսնեն բարգավաճության և վերելքի երջանիկ տարիներ, և մենք ալ կարենանք զայն տեսնել և իր ծոցին մեջ վայելել և լրացնել մեր խորին կարոտը:

Մատչելով խոնարհությամբ ի համբույր Ձեր Ս. Աջույն,
մնամ Վեհափառ Տերությանդ ամենախոնարհ ծառա՝

Հ. ՔԵՐՈՎԲԵ Ա. ԶՐԱՔՑԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԹՈՌԱԿԱԼ ՄԵԼԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Վեհափառ Տեր.

Խորին երախտագիտությամբ ստացա Վեհափառ Տերությանդ Ս. Մնունդի և նոր տարվա առիթով մաղթանքի գիրը, որով հաճած էիք ազնվարար պատվել գիս ու միաբանությունս:

Եթե անհասելի և անհաս Տնօրենությամբ էջն Միածնին ի Բեթղեհեմ հայտանիշ ու գրավական է աստվածային անհուն մարդասիրության, հրեշտակներու ավետավոր երգն ալ հրավեր է մարդկության, համապատասխանելու այդ մեծ ու սքանչելի խորհուրդին, Աստուծո փառքն առաջացնելով և բարի կամեցողությամբ անկեղծորեն ծառայելով աշխարհի խաղաղության:

Կաղթեմ, որ Վեհափառ Տերությանդ այս կրկին նվիրական նպատակներու միայն ուղղված ջանքերը տան ուրախարար արգասիք, և Բանն մարմնացյալ շնորհե Ձեզի երկար տարիներու շարք մը բաղձալի ողջությամբ և բազմարդյուն գործունեությամբ:

Խորին հարգանքի հավատիքներով եմ Վեհափառ Տեառնդ աղոթակից՝

Հ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՊՈՅՋԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԹԱ

ՎԻԵՆՆԱ

ԱՄԵՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՆՎԻՐԱԿԵՑԱԿԱՆ ԱՂՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՑԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Այսօր, երբ մեզ կնայտնվի մեծ և սքանչելի խորհուրդը մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդյան, Փրկչի Իշման Ս. Տաճարեն հուսացյալ սրտով Ձեզ կբերեմ ճրեշտակներու քաղցր երգը հաղթական, իրեւ ավետիս և պատգամ.

«ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՅԵՐԿՐԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Եվ չերմապես կաղոթեմ առ Պարգևատուն բարյաց, որ Ս. Ծննդյան և Աստվածահայտնության շնորհներով պարգևե Ձեզ, քահանայից դասուն, եկեղեցական-ազգային կազմակերպության անդամներուն և համայն հավատացյալ Մեր զավակներուն անխափար՝ արևաշատ երկար տարիներ քաջառողջությամբ, բարեբախտությամբ և խաղաղությամբ:

Միշտ լեռամ բոլորդ ի Քրիստոս սիրով միաբան և համերաշխ, ու հավատարիմ մեր Մայր Եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ ի փառս Աստուծոյ և ի շինություն մեր ազգային հոգևոր կյանքին:

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»: ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ:

Հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլբենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Արգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարեբարներին և ազգային ծանոթ դեմքերին:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մարդացյալ Փրկիչը Իր խաղաղությամբ և հոգևոր վերածնունդով վերանորոգ խոով աշխարհը բոլոր ժողովուրդների Երչանկության համար: Միածին որդի Վեհիդ և առատ պտուղներով արդյունավոր Ձեր Եկեղեցանվեր բոլոր ձեռնարկները: Այս է, ամենուս սրտագին մաղթանքը ամանորի և Ս. Մեղդյան առթիվ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Նոր տարվան և Ս. Մեղդյան տոների առթիվ կմատուցանենք ջերմագին շնորհավորություն, մաղթելով Վեհափառությանդ բարեբաստիկ տարիներ, Բաշառողջ կյանք, լավագույն հաջողություն Ձեր Արոռաշեն, ազգանվեր և եկեղեցաշեն գործոց:

ԽԱՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԴԱՄԱՍԿՈՍ

Նոր տարվան և Աստվածահայտնության տոնի առթիվ կներկայացնենք Ձերդ Ս. Օծության ժեր և Սրբոց Հակոբյանց միաբանության հարգալից շնորհավորությունները:

Կաղոթենք ամենակալին Ձեր կյանքի արեշատության համար, խաղաղությամբ ճոխվելու մեր եկեղեցվո հոտը:

ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Նոր տարվա և Ս. Մեղդյան տոների առթիվ Ձեր ճղած շնորհավորությունների համար ամենաանկեղծ շնորհակալություններ և ամենահարգալից բարեմաղթություններ առաջիկա տարվա համար:

ԱԶՆԻՎՈՐԴ ՊԵՐԴԻԳԱՆ

ԼԻՍԱԲՈՆ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, թեմական և եկեղեցական խորհուրդներից, հոգևոր հովիվներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍԻՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամերիկայի հայոց վիճակի թեմական պատգամավորական ժողովը գումարվեցավ նոյեմբեր 15—16 օրերուն Նյու-Յորքի հայոց Սրբոց Նահատակաց եկեղեցիին մեջ, առաջնորդ գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի նախագահությամբ և 116 պատգամավորներու մասնակցությամբ: Միաձայն Իվեներով թեմական առաջնորդ ընտրվեցավ Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Սիսակ արքեպիսկոպոս Մանուկյան:

Ձերդ Վեհափառութենեն խոնարհաբար կխնդրենք ընտրության վավերացումը:

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ատենապետ՝ ԲԱԲԳԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՔՍՈՒՏՅԱՆ
Ատենադպիր՝ ԱՐԱ ԱՎԱԳՅԱՆ

17 նոյեմբեր 1958
ՆՅՈՒ-ՅՈՐՔ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Դոհությամբ ստացանք պատգամավորական ժողովիդ պաշտոնագիրը թեմական առաջնորդի ընտրության մասին: Միրով կհաստատենք Սիսակ արքեպիսկոպոս Մանուկյանի ընտրությունը իբրև առաջնորդ թեմիդ: Կշնորհավորենք նորընտիր առաջնորդը և պատգամավորական ժողովդ:

Կհաշորդե հատուկ կոնդակ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

12 դեկտեմբեր 1958
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 6-ին, երեքշաբթի օրը, Մայր Աթոռում հանդիսությամբ և ավանդական շքով տոնվեց Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան տոնը։

Առավոտյան ժամերգություններ պաշտվեց Մայր Տաճարում։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, Մայր Տաճար առաջնորդվեց՝ Ս. Ծնընդյան պատարագ մատուցելու համար։

Մայր Տաճարը լիքն էր հավատացյալների և ուխտավորների բազմությամբ։

Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ էին գրավել պաշտոնական անձնավորություններ։

Սուրբ պատարագի ժամանակ Վեհափառ Հայրապետին սպասարկում էին Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանները, Տ. Եղիշե, Տ. Մուշեղ, Տ. Մեսրոպ վարդապետները, Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը և սարկավագների ամբողջ դասը։

Մայր Աթոռի երգչախումբը, պր. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, վեհ և հանդիսավոր երգում էր սուրբ պատարագը։

«Հայր մեր-ից առաջ Վեհափառ Հայրապետը, Քրիստոսի հրաշափառ և Ս. Ծննդյան ավետիսը տալով բովանդակ հայ հավատացյալ ժողովրդին, խոսեց Իր գեղեցկագույն քարոզներից մեկը՝ Ս. Ծննդյան խորհրդով օծուն և հայրենասիրական ջերմ շնչով բաբախուն,

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։

«Սիրեցյալ ճայ ճավատացյալ ճարազատ ժողովուրդ մեր.

Այս գիշեր, այս լույս գիշեր, մեծ և սքանչելի խորհուրդով օծուն, Միածնի իջման աշխարհեն, Մայր Հայաստանեն, ձեզ մեծ ավետիս.

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»։

«ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»։

Ծնավ և ճայտնեցավ Աստդարության Աբգարը, որ երկու ճազար տարիներե ի վեր կլուսավորե ճամայն աշխարեը մարդկային, ու կջերմացնե սրտերը բոլոր տառապյալ բայց միշտ ճուսացյալ մանկանացուներուն։

Ծնավ և ճայտնեցավ Սիրո Պատգամաբերը, որ մարդուն ճակատագիրը փոխեց և դռները բացավ բարոյական արժեքներու նոր աշխարեի մը։

Ծնավ և ճայտնեցավ խաղաղության Պատվիրանը, և մարդը իր կյանքի նոր ուխտը կնքեց երկնքին ճետ՝ խաղաղության Աստուծուն ճետ։

Սերունդներ, սերունդներ, շարան-շարան, եկան ու անցան, դարեր և դարեր իրենց լույս ու խավարով, բավալցոր եկան ու

անցան, բայց մարդուն ճայացքը միշտ սևեռած մնաց Բեթղեհեմի աստղին՝ միշտ ճուսալով, միշտ երազելով, միշտ ըղձալով՝ «ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ. Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Եվ այսօր ալ մարդիկ, բոլոր ճորիզոններու տակ, մեծ ճշմարտությունը կարոնեն, արդարություն կճայցեն և խաղաղության կտեսնան:

Այդ սուրբ տեսիլը, մարդուն մեջ, ճավիտենապես մարդկայինն է, որուն իրև պատասխան Աստված Իր Միածին Որդին երկիր առաքեց, որպեսզի «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՍՏԱՏԵՍՑԻ Ի ՍԻՐՏՍ ՁԵՐ» (Կողոս. Գ 15):

Եվ, ինչպես խոնարհ հովիվները երկու հազար տարիներ առաջ, այսօր ալ մենք բոլորս, հոգեն ծնած, բայց Արդարության Արեգակին լույսով երկինքը փնտռող հուսացյալներ, մանկացյալ հոգիով կլսենք աշխարհի ու կյանքի բոլոր երգերուն ամենեն քաղցրը, ամենեն սրտառուչը, ամենեն հոգեպարարը՝ «ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Խաղաղություն երկրի վրա, և մարդոց մեջ բարի կամեցողություն. այո է ոսկի երազը բոլոր ժամանակներուն և բոլոր ժողովուրդներուն: Տե՜ր Աստված, բաց մեզ ողորմության դռները և տուր մեզ քու խաղաղությունդ: Խաղաղությո՜ւն տուր մեզ ամենուս հավասարապես և ամբողջապես, այժմ և միշտ:

Բավական է ինչքան արյան և արցունքի գետեր հոսեցան:

Հեռո՜ւ մեզմե և մեր աշխարհի սահմաններեն բոլոր տեսակի ավերակներու ճարտարապետները: Այսօր մարդիկ, պարզ մարդիկ, իրավ մարդիկ, կուզեն խաղաղ ապրիլ, կուզեն ջինել, կուզեն երգել, և մայրերը կուզեն իրենց երեխաները արևին բարձրացնել պայծառ երկնքի տակ: Ճամբա տվեք խաղաղության լույս աղավնիին: Թող ան սավառնի ազատ ու անվրդով, հերդաշնակություն և բարություն սփռելով հորիզոն հորիզոն:

Խաղաղությո՜ւն աշխարհին ամբողջ:
Խաղաղությո՜ւն բոլոր ժողովուրդներուն:
Խաղաղությո՜ւն հայ ժողովուրդին:

«ԵՂԻՑԻՆ ԳՈՐԾՔ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ» և «ԲՆԱԿԵՍՑԷ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՄ Ի ՔԱՂԱՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՆԱԿԵՍՑԷ ՅՈՒՍՈՎ, ԵՒ ՀԱՆԳԻՍՑԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ» (Եսայի ԼԲ 17—18):

Խաղաղություն մանավանդ ի օգուտս աշխարհի ցրված բոլոր հայերուն: Եվ շմոռնանք, որ մեր ժողովուրդի կյանքի խաղաղության առաջին պայմանը միության և սիրո վերահաստատումն է Հայ եկեղեցվո ծոցին մեջ:

Անդադար աղոթեցե՛ք և անդադար գործեցե՛ք այս ուղղությամբ, սիրելի՛ հավատացյալներ մեր:

Իմաստուն ու վճռական գործելակերպով և միացյալ ուժերով, անհրաժեշտ է առաջքը առնել եկեղեցական պառակտումին, որ առավել տարածվեցավ անցնող տարվան ընթացքին: Պարսկաստանի մեր երեք թեմերուն ևս պարտադրվեցավ Ս. Էջմիածնեն բաժնվելու փորձը, անիմաստ կերպով, առանց որևէ պատրվակի իսկ, և ընդդեմ հոգևորականության և հավատացյալ ժողովուրդի կամքին:

Ա՜յս է արդյոք սիրո, միության և խաղաղության ազգաջնեն ուղին: Անշուշտ ոչ: Անա թե ինչու Մենք, խաղաղության մեր ուխտին վերահաստատման այս սրբազան պահուն, Աստվածորդվույն Ս. Մննդյան շնորհները կնայցեն Մեր բոլոր սփյուռքահայ զավակներուն համար, որպեսզի անոնք բոլորը անխտիր աղոթեն ու աշխատին միասնության և խաղաղության համար, իմաստությամբ և բարի համարձակությամբ, հաստատուն մնալով իրենց հազարամյա հավատքին վրա, հավատարմությամբ դեպի Ս. Էջմիածինը, որ աստվածապարգև վեմն ու գրավականն է հայ ժողովուրդի հոգևոր անբաժանելիության և գոյատևման:

Հետևաբար, սիրելի՛ պանդուխտ զավակներ Մեր, պաշտպանեցե՛ք Հայաստանեայց Ս. եկեղեցվո միությունը, պաշտպանեցե՛ք Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աստվածահաստատ իրավունքները, պաշտպանեցե՛ք հայ կյանքի խաղաղությունը, քաղցրությամբ պարտադրելով ձեր բարի խոսքը բոլոր տեսակի հոգևորական թե աշխարհական ուղեկորույսներուն;

«ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԶՀԵՏ ԵՐԹԻՑՈՒՔ ԶԵԱՂԱՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ՝ ՈՐ ԱՌ ՄԻՄԵԱՆՍ» (Հռոմ. ԺԹ 19):

Եվ, սիրելի՛ պարսկահայեր, մանավանդ դո՛ւք, հավատավոր և քաջարի որդիք հայ ժողովրդյան, որ դարերե ի վեր խաղաղ կապրիք մեր դրացի հյուրընկալ Իրանի մեջ, ձեզ բոլորիդ կոչ կընեմ՝ Ս. էջմիածնով միացե՛ք և զորացե՛ք, և թույլ մի՛ տաք, որ ձեզ հափշտակեն անհարազատ ձեռքեր:

Այդ անհարազատ ձեռքերը կփորձեն անջատել ձեր եկեղեցիները Մայր Աթոռ Ս. էջմիածնեն, Թեհրանի, Թավրիզի և Սպահանի թեմական խորհուրդներու հակականոնական որոշումներով, և կկամենան ձեզ միացնել այլ կեդրոնի, որ ավագի վրա է հիմնված, և որուն անլույս դեկավարներու կյանքի նպատակն է՝ հանդել Ամենայն Հայոց Սրբություն Սրբոց աստվածակառույց էջմիածնի հիմքերը: Այդ չար օգին թող հեռանա ձեր սահմաններեն, թող հեռանա ձեր եկեղեցիներեն, ձեր տուներեն, որպեսզի դուք զտնեք ձեր կյանքի խաղաղությունը Ս. էջմիածնի սուրբ զորությամբ:

«Ի ՎԵՐԱՅ ԱՋՈՑՆ ԵՒ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՄԵՆԱՅՆ ԱՋԳՆ ՀԱՅՈՑ ԿԱՊԵԱԼ ԿԱՆ»,— կպատգամե Առաքել Դավրիժեցին: Նույնքան իրավամբ Մենք պիտի կարողանայինք ըսել այսօր, թե մեր ամբողջ ներքին միությունը և խաղաղությունը Ս. էջմիածնի վրա է հիմնված: Սեր և միություն և խաղաղություն մեր Ազգին ու մեր Ս. եկեղեցիին. ա՛յս է մեր կյանքի շինության ու փրկության ճանապարհը: Ահա թե ինչու Մենք, Փրկչի Իշման Ս. Սեղանի առաջ ծնրադիր, ջերմապես կհայցենք Աստուծմե՝

«ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Մենք այստեղ, մեր Հայրենի Ս. Հողին վրա կանգնած, բազմադարյան էջմիածնի լույս կամարներուն տակ, Մեր մտածումը, Մեր գործունեությունը և ապագայի Մեր բոլոր ծրագիրներու իրագործումը կհիմնենք ոչ թե համաշխարհային պատերազմի մը հավանականության վրա, ոչ թե միջազգային կյանքի լարված դրության վրա, ոչ թե ընկերային-քաղաքական աշխարհայացքներու հակամարտության վրա, այլ համայն աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության, պետություններու համերաշխ գործակցության, ու մեր փոքրիկ, ցիրուցան Ազգին միասնականության և եկեղեցական միության, և ավետարանական սիրո պատվիրաններուն վրա:

Այո, Մենք կհավատանք, թե ի վերջո Բարին պիտի հաղթանակե և արդարությունը պիտի թագավորե խաղաղությամբ, հերջանկություն բոլոր ժողովուրդներուն, հերջանկություն նաև Հայ Ազգին:

Դո՛ւք, հարազատնե՛ր Մեր, «ՄԻԱԲԱՆ ԼԻՐՈՒՔ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԷՔ, ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ ԵՂԻՑԻՒ ԸՆԴ ԶԵԶ» (Բ Կորնթ. ԺԳ 11):

Սիրելի՛ հայ հավատացյալ ժողովուրդ. այս բարի հույզերով ու մտածումներով գոտեպնդված, լավատեսությամբ և հշմարիտ ուրախությամբ, բոլորս միասիրտ ու միակամ ողջունենք մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան և Աստվածահայտնության տոները, և բանանք դռները նոր տարվույն՝ 1959 թվականին, ու մաղթենք ի սրտե՝ որ ան ըլլա խաղաղության տարի, հաշտության տարի, և մեր Ազգի ու եկեղեցիի միասնության ամրապնդման տարի, ի մխիթարություն և հերջանկություն մեզ ամենուս:

Թող ամենակարողն ու բարին Աստված ձեզ բոլորդ, սիրեցյա՛լ զավակներ Մեր, պահե-պահպանե քաջառողջ ու բարօր, սիրով միաբան և առաքինի գործոց լիակատար հաջողությամբ:

Թող խաղաղ ապրի, բարգավաճի ու ծաղկի մեր ժողովուրդը և մեր վերածնած Մայր Հայրենիքը, մեր աչքի լույս, մեր անուշ Հայաստանը:

Թող զորանա ու չհեն մնա մեր Ս. եկեղեցին իր Մայր Աթոռով, իր Ս. էջմիածնով և իր բոլոր նվիրապետական Աթոռներով, ի փառս Աստուծո և ի պարծանս Ազգիս Հայոց:

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»:

Շնորհավոր նոր տարի և Ս. Ծնունդ:

«ՇՆՈՐՀՔ, ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ Ի ՀՕՐԷ, ԵՒ Ի ՏԵԱՌՆԷ ՅԻՍՈՒՍԷ ՔՐԻՍՏՈՍԷ ՀՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՍԻՐՈՎ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԶԵԶ» (Բ ՅՈՎՀ. Ա 3), այժմ և հավիտյան. ամեն»:

Վեհափառ Հայրապետի հոգեշունչ այս քարոզից հետո նույն հանդիսությամբ շարունակվեց սուրբ պատարագը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ Սեղանի բեմի առաջ կատարվեց Ջրօրհնեքի սրբազան արարողությունը՝ ի հիշատակ Քրիստոսի մկրտության Հորդանան գետում, Հովհաննես Մկրտչի ձեռքով։

Վեհափառ Հայրապետը կարդաց Ս. Բարսեղ Կեսարացու մեծ աղոթքը։

Ապա Մայր Տաճարում հնչեցին դաշն ու հոգեշունչ «Ո՜վ զարմանալի» և «Այսօր ձայնն հայրական» Մկրտության տաղերը։

Հավատացյալները ջերմեռանդությամբ վերցրին Քրիստոսի մկրտության ջուրը և հոգեպես պայծառացան նաև տոնի խորհրդով։

Ջրօրհնեքի արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը, հավատացյալների աղոթքի և բարեմաղթությունների միջով, առաջնորդվեց Վեհարան։

Ծաղկյա դահլիճում, բազմած Հայրապետական Գահի վրա, Նորին Ս. Օծությունը ընդունեց Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմի, վանքի պաշտոնեության և այլ պաշտոնական անձնավորությունների շնորհավորությունները Ս. Ծննդյան տոնի առթիվ։

Ընդունելության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց Ազգն ու եկեղեցին, Հայրենիքն ու ժողովուրդը և մաղթեց ողջ աշխարհին խաղաղություն և մարդկանց միջև հաշտություն։

Երեկոյան ժամը 4-ին, Վեհարանի սեղանատան մեջ, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ և այլ պաշտոնական անձնավորություններ սեղանակից եղան Վեհափառ Հայրապետին։

Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջ գտան Ս. Ծննդյան տոների հանդիսությունները Մայր Աթոռում։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԻՆ

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ՍՊԱՀԱՆ, ԻՐԱՆ

Մեծահարգ միաբ.

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից լիազորված եմ Ձեր սույն թվականի հոկտեմբեր 28-ի գրության առթիվ հայտարարելու հետևյալը, ի գիտություն թեմական խորհրդիդ և Սպահանի թեմի համայն հավատացյալ ժողովրդի.

Ա) Թեմիդ պատգամավորական ժողովի կողմից՝ Ս. Էջմիածնից անջատվելու վերաբերյալ ընդունված որոշումը անհիմն է և ապօրինի, իսկ բերված փաստարկումները՝ կեղծ և շինծու: Պատգամավորական ժողովը չի արտահայտում Սպահանի թեմի հայ բարեպաշտ հավատացյալ ժողովրդի կամքը: Այդ ժողովուրդը դարեր շարունակ կապված է եղել իր հավատի կենտրոն Ս. Էջմիածնի հետ՝ անկախ հասարակական-քաղաքական պայմաններից և իրադրություններից, և շարունակում է մնալ այդպիսին: Ոչ ոք իրավունք չունի մեր ժողովրդի սրտից պոկելու դեպի Ս. Էջմիածինը տածած հավատն ու անսահման սերը:

Թեմական պատգամավորական ժողովի տված որոշումը մի մասնիկն է եկեղեցահաղթ այն անալոր ծրագրի, որը փորձում են գործադրել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահերի բշնամի, մեր ժողովրդի հոգևոր-բարոյական միասնությունը քանդող մի խումբ անհեռատես, ուղեկորույս մարդիկ, թելադրված զուտ կուսակցական մութ նպատակներից:

Բ) Մայր Աթոռի և Սպահանի թեմի միջև գոյություն են ունեցել ոչ թե ձևական ու անվանական, այլ բնականոն փոխհարաբերություններ, ինչպես անցյալ որեէ ժամանակաշրջանում: Վերջին 3—4 տարվա ընթացքում Մայր Աթոռը ամեն ջանք ի գործ է դրել՝ լուծելու թեմական առաջնորդի հարցը և բարելավելու թեմական խորհրդի գործունեությունը, հենց Իրանի կառավարության 1949 թվականի որոշման ոգով, սակայն միշտ էլ հանդիպել է թեմի ազգային-եկեղեցական մարմինների քար անտարբերության և լռության:

Դ) Ելնելով վերոհիշյալից, Մայր Աթոռը հակականոնական և չեղյալ է համարում թեմիդ պատգամավորական ժողովի որոշումը՝ Ս. Էջմիածնից բաժանվելու և Անթիլիասին միանալու վերաբերյալ, որոշում, որը միանգամայն հակառակ է իրանահայության կամքին ու հոգևոր-ազգային շահերին:

Դ) Իրանի հայրապետական թեմերը, այդ թվում նաև Սպահանի թեմը եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև և կանոնական-իրավական տեսակետից ո՛չ մի մարմին իրավունք չունի Հայաստանյայց եկեղեցիներ ու նրա հավատացյալները բաժանելու իրենց դարավոր նվիրական կենտրոնից՝ Ս. Էջմիածնից:

Աղոթարար՝

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՅԵՆԱՊԵՏ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
27 դեկտեմբերի 1958 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ Տե՛ր.

Այսու որդիական պարտք ենք համարում Ձերդ Վեհափառության խոնարհաբար հողորդելու, որ Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի պատգամավորական ժողովը, գումարված տարվույս հոկտեմբերի 26-ին, իր հերթական և յիսկատար նիստում, թեմս թեմական առաջնորդով օժտելու առնչությամբ, ենթության առնելով թեմիս և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի փոխհարաբերությունները գտավ, որ 1949 թվականից ի վեր իրանահայ թեմերի համար ստեղծված բացառիկ պայմանների հետևանքով, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Իրանա-Հնդկաստանի թեմի հարաբերությունները ունեցել են միայն անվանական բնույթ: Միաժամանակ ի նկատի առնելով կենսական նշանակություն ունեցող և անհրաժեշտություն ներկայացնող մի շարք այլ պատճառներ, հիմնավորված պատգամավորական ժողովի բանաձևի մեջ, որոշեց դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած իր անվանական և ձևական կապը ևս, և խնդրամատույց լինել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռին՝ իր հովանու տակ առնել Իրանա-Հնդկաստանի թեմը:

Մատչելով ի համբույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն, մնամք խորին հարգանքով՝

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Նախագահ՝ ՋԱՆԻ ՊԱՐԹԵՎ

Փոխ-նախագահ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

Քարտուղար՝ ԵՍԱՅԻ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

ՆՈՐ-ՋՈՒԼԱ
28 հոկտեմբերի 1958 թ.

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1958 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեցին Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ պր. Եփրեմ Ալեքսանյանի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամ պր. Գրիգոր Բեքմեզյանի զեկուցագրերը՝ Մայր Աթոռի 1957 թվականի տնտեսա-ֆինանսական և հաշվապահական գործերի ստուգման արդյունքների և Վերստուգիչ հանձնաժողովի կողմից Մայր Աթոռի ամբողջ գույքի ցուցակագրման աշխատանքների արդյունքների մասին։

Վերստուգիչ հանձնաժողովը ամենայն բարեխղճությամբ և մանրամասն կերպով քննարկման էր ենթարկել Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական վարչության և հաշվապահության գործունեությունը և արել մի շարք կարևոր դիտողություններ և առաջարկներ։ Այս առթիվ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ պր. Եփրեմ Ալեքսանյանի զեկուցման մեջ նշված դիտողություններն ու առաջարկությունները քննության առնել Գերագույն Հոգևոր Խորհրդի 3 անդամներից բաղկացած մի ժողովում, մասնակցությամբ Վերստուգիչ հանձնաժողովի անդամների և Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական գործերի պատասխանատու աշխատողների։

Պր. Գրիգոր Բեքմեզյանի զեկուցման առթիվ Գերագույն Հոգևոր Խորհուրդը արձանագրեց իր խորին գոհունակությունը Վերստուգիչ հանձնաժողովի կատարած բարեխիղճ աշխատանքի մասին։

1958 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում որոշեց ընդառաջել Ռումինիայի հայոց թեմի թեմական խորհրդի՝ նոր տարվա և Ս. Մենդյան տոների առթիվ, երկու ամիս ժամանակով, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանին Բուխարեստ հրավիրելու խնդրանքին, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդյան, և կատարելու քահանայական ձեռնադրություն։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում, հարգելով Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմական խորհրդի միջնորդությունը, որոշեց Նոր-Նախիջևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նորոգության ծախսը, շուրջ 40 000 ռուբլի, վճարել թեմի՝ Մայր Աթոռին հասանելիք եկեղեցական հասույթների հաշվին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում որոշեց, Ադրբեջանի հայոց թեմական խորհրդի միջնորդագրի հիման վրա, ծերունազարդ Տ. Համազասպ քահանա Աբրահամյանին և Տ. Գրիգոր քահանա Սարգսյանին ամսական 300-ական ռուբլի կենսաթոշակ նշանակել, 1959 թվականից սկսյալ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում մեծ ցավով քննության առնելով վերջին ամիսների Բեյրութի հայ ժողովրդի ծոցում կատարված տխուր դեպքերն ու եղբայրասպան ընդհարումները, որոնք ավելի խորացնում են Լիբանանի հայության միչև գոյություն ունեցող տարաձայնությունները և վարկաբեկում են հայ ժողովրդի անունը օտարների առաջ, որոշեց արձանագրել իր խորունկ վիշտն և խնդրել Վեհափառ Հայրապետին՝ հայրական հատուկ կոչով դիմել Լիբանանի ողջ հայության և հորդորել բոլորին՝ վերջ տալու եղբայրասպան այդ տխուր դեպքերին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր ցավակցություն, արտահայտելով տուժած հայ ընտանիքներին, խնդրեց Վեհափառ Հայրապետին 25 000 լիբանանյան ոսկի հատկացնել այդ նպատակին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջոցներից։

1958 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի թեմական պատգամավորական ժողովի նոյեմբեր 17 թվակիր պաշտոնական գրությունը թեմական նոր առաջնորդի՝ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի ընտրության և վեհափառ Հայրապետի կողմից ընտրության հաստատման մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, արձանագրելուց հետո իր գոհունակությունը այն մասին, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի թեմական պատգամավորական ժողովը տեղի է ունեցել բոլոր պատգամավորների համերաշխության և միասնության մթնոլորտում և դրանով արտահայտվել է թեմի հայ հավատացյալ ժողովրդի կուռ համախմբումն ու ազգային-եկեղեցական միասնությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա դարավոր կենտրոն Ս. Էջմիածնի շուրջ, և նկատի ունենալով թեմական պատգամավորական ժողովի կատարած նոր ընտրության օրինականությունը, որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետին՝ հայրապետական հատուկ կոնդակով շնորհավորել և հաստատել Սիոն արքեպիսկոպոսի ընտրությունը իբր թեմական առաջնորդ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում հաստատեց նաև Բուլղարիայի հայոց թեմի թեմական պատգամավորական ժողովի կողմից ընտրված թեմական խորհրդի նոր կազմը, որի մեջ ընտրվել են Լ. Համբարձումյանը, Ս. Փաշաճյանը, Ս. Հովհաննեսյանը, Հ. Գալյանը, Ռ. Մեսրոպյանը, Լ. Մեծատուրյանը և փոխ-անդամներ Հ. Գույումճանը և Գ. Ասլանյանը։

Վերստուգիչ հանձնախմբի մեջ ընտրվել են Ն. Քիրազյանը, Ե. Սարաֆյանը, Գ. Տերտերյանը, փոխ-անդամ Մ. Վարդազարմյանը։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ վերոհիշյալ նիստում քննության առնվեց նաև Սպահանի հայոց թեմական խորհրդի նամակը, Սպահանի թեմը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բաժանելու փորձի մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, Սպահանի թեմական խորհրդի այդ փորձը համարելով հակականոնական և չեղյալ, որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետին՝ հատուկ հորդորական կոչով դիմել Իրանի հայության, հրավիրելով իրանահայ ողջ գաղութի ուշադրությունը քաղաքական մրցակցություններից հրահրված և թելադրված այդ հակականոնական, եկեղեցաքանդ և ազգակործան փորձի տխուր հետևանքների վրա, հորդորելով միաժամանակ բոլորին՝ հավատարիմ մնալ Ս. Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ազգային-եկեղեցական միասնականության ոգուն և սկզբունքներին։

1958 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց Հունաստանի հայոց թեմական խորհրդի դեկտեմբեր 8 թվակիր պաշտոնական գրությունը՝ թեմի ազգային-եկեղեցական գործերի կացության մասին։

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով, արժանապատիվ Տ Արմենակ-Մեսրոպ քահանա Տեր-Հակոբյանը նշանակվեց Հունաստանի թեմի առաջնորդական տեղապահ։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը խնդրեց Վեհափառ Հայրապետին՝ հաստատել Հունաստանի առաջնորդական տեղապահի պաշտոնը և Տ. Արմենակ-Մեսրոպ քահանային շնորհել ավագության պատիվ։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանգիստարդությամբ, կատարվեց հոգեհանգիստ ի հիշատակ Մայր Աթոռի բարերար, վերջերս Բելգրիոնում վախճանված Լևոն Նազարյանի։

Հավարտ սուրբ պատարագի Վեհափառ Հայրապետը ընդունեց սուրբ պատարագին ներկա եղող հալեպահայ ուխտավորներին։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ», Օրվա տոնի առթիվ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը։

Նույն օրը, ժամը 3-ին, Մոսկվայից Մայր Աթոռ ժամանեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, որը առժամաբար վարում էր Մոսկվայի հայոց հոգևոր հովվությունը, Մոսկվայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանի հիվանդության պատճառով։ Տ. Պարգև վարդապետը, ապաքինված, անցավ իր պաշտոնին։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռ ժամանեց գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը՝ վրահայոց թեմի վերաբերյալ կազմակերպչական հարցերով զբաղվելու։

Սրբազանը ամսի 15-ին վերադարձավ իր թեմը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ, ՇԱԲԱԹ, տոն «Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին», Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Թբիլիսի մեկնեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, վրահայոց թեմական-կազմակերպչական գործերի կապակցությամբ։ Սրբազանը վերադարձավ ամսի 25-ին։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում սկսվեցին 1958—1959 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննությունները, որոնք տևեցին մինչև դեկտեմբերի 31-ը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գայամգարյանի և Մայր Աթոռի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանի, հետմիջօրեի ժամը 3-ին երևանում այցելեց Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանի ծննդյան 75-ամյակի առթիվ կազմակերպված ցուցահանդեսը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը երևանում այցելեց Արարատյան թեմի առաջնորդարանը։

Ժամը 4.30-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, գումարվեց թեմի թեմական խորհրդի նիստը, որտեղ Արարատյան թեմի թեմական խորհրդի 1958 թվականի գործունեության մասին զեկուցեց թեմական խորհրդի ատենապետ արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Անդրեասյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Վիեննայի ճարտարապետների խումբը, որը մեծապես հետաքրքրվեց Մայր Տաճարի ճարտարապետական առանձնահատկություններով։

Ճարտարապետների խումբը եղավ նաև Մայր Աթոռի հնագիտական թանգարանում և մեկնեց լավագույն տպավորություններով։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, ընկերակցությամբ արժանապատիվ Տ. Արամ քահանա Բոյաջյանի, Վեհափառ Հայրապետին բերելու հատ Ս. Էջմիածնի նկարով գործված գորգը, Վեհափառ Հայրապետի Հոբելյանի առթիվ, որպես թեմի հոգևորականության նվերը։

Հոգեշնորհ հայր սուրբը իր թեմը վերադարձավ ամսի 30-ին։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հալեպից Մայր Աթոռ ժամանեց բարեշնորհ Հովհաննես սարկավագ Կարա-Ծաղուպյանը, որպես ուսանող Հոգևոր Ճեմարանի։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, «Ամենայնի որ ունիցի՝ ասցի և որ ոչն ունիցի և զոր ինչ ունիցին բարձցի ի նմանէ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

1959 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, կաղանդ և նոր տարեմուտ։

Մայր Տաճարում, նոր տարվա ուրախ առթիվ, Իշման Ս. Սեղանի առաջ եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ մատուցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը, որը և քարոզեց, «Որհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քո» (Սաղմ. ԿԴ 13) բնաբանով։

Սրբազան քարոզիչը ծանրացավ սույն Սաղմոսի 10—14 համարների վրա, որտեղ երկնքի օրհնություններն էր հայցում Դավիթ Մարգարեն՝ Իսրայելի ժողովրդի համար. «Դիշատք քո լցցին պարարտութեամբ, պարարտասցին գեղեցկութիւնք անապատի. բլուրք ցնծութիւն զգեցցին. զգեցցին խոյք մաքեաց, հովիտք բազում արասցեն զցորեան»։

Սրբազան քարոզիչը արեց նույն մաղթանքները մեր եկեղեցու, երկրի և ժողովրդի համար նոր տարվա առաջին օրվա մեջ։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք։

Նոր տարվա տոնի առթիվ Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց բազմաթիվ շնորհավորություններ։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը բարեհաճեց իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Ճրագալույց Մանդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում, երեկոյան ժամերգության ժամանակ, ավանդական կարգով կատարվեց Ճրագալույցի արարողությունը։

Ճրագալույցի սուրբ պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, որը և քարոզեց Քրիստոսի Մանդյան տոնի նշանակության և մարդեղության խորհրդի աստվածաբանական նշանակության մասին և շնորհավորեց Մայր Աթոռի միաբանության Մանդյան տոնը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց նախատոնակ։ Հանդիսավոր ու ցնծագին հնչեց «Որհուրդ մեծ և սքանչելի» Մանդյան շարականը։

Ճրագալույցի արարողության նախագահում էր Վեհափառ Հայրապետը, որը հավարտ սուրբ պատարագի եկեղեցական թափորով առաջնորդվեց Վեհարան։

Մայր Աթոռի ողջ միաբանությունը սեղանակից եղավ Վեհափառ Հայրապետին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»։

Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարությունն աբեղա Մատենյանը։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ մեռելոց։



ՀՈՐԵԼԻՑԱՆԱԿԱՆ ՆՎԵՐՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՊԱՆԱԿԵ-ԱՐԾԻՎԸ

Վեհափառ Հայրապետի ծննդյան 50-ամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ, Գերագույն Հոգևոր Խորհուրդը պատրաստել էր տվել մի գեղեցիկ ոսկե պանակե-արծիվ, որպես նվեր, որը Հոբելյանական հանդեսի օրը, 1958 թվականի հոկտեմբերի 12-ին, Ծաղկյա պահլիճում, պաշտոնապես հանձնվեց նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՎԻՐԱՆ ՊԱՆԱԿԵ-ԱՐԾԻՎԸ

Պանակե-արծիվը իրենից ներկայացնում է հայկական ոճով նախագծված երկգլխանի արծիվ, բաց թևերով կանգնած Վահագնի ոճավորված բոցերի հանգույցում, եռաթև տերևների վրա։ Արծվի գլուխները պսակված են հայկական արքայական (Տիգրան Մեծի, Արտավազդի) թագով, որը զուգակշռված է թայի միջոցով միացված է արծվի թևերի վարդյակների հետ։

Արծվի կրծքին՝ ձվաձև մուգ կապույտ կիտվածապատ շրջանակի մեջ նախագծված է հայկական ոճի խաչ, զարդարված ադամանդներով։ Ձվաձև կիտվածապատ շրջանակը երիզված է նույնպես ադամանդներով։ Արծվի թևերի վրա նախագծված են վարդյակներ, զարդարված երկու շրջան ադամանդ քարերով, իսկ կենտրոնում մեկ հատ մեծ ռուբին։ Պանակե-արծվի արքայական թագը և Վահագնի բոցերը զարդարված են նույնպես ադամանդներով և ռուբին քարերով։ Պանակե-արծիվը կրվում է կրծքին ոսկյա շղթայով, որի համար արքայական թագի հակառակ կողմից նախատեսված է հատուկ հարմարանք։

Պանակե-արծվի չափերն են. ամբողջ բարձրությունը՝ 11,6 սմ., բարձրությունը, առանց արքայական թագի՝ 9,5 սմ., լայնությունը, թևերի վարդյակների մասում՝ 7,8 սմ.։

ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՀՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՎԻՐԱԾ ԳՈՐԳԸ

Արծիվը քրիստոնեության խորհրդանշաններից մեկն է։ Ե դարից սկսած հայ ճարտարապետների և քանդակագործ վարպետների կողմից արծիվը պատկերվել է տաճարների, եկեղեցիների և կոթողների վրա. օրինակ՝ Զվարթնոցի զարմանահրաշ և անգերազանցելի արծիվ-խոյակները, Անիի Մայր Տաճարի, Տիգրան Հոնենցի եկեղեցու, Բախտագնի եկեղեցու, Մոսկարավանքի, Թանահատի և բազմաթիվ այլ եկեղեցիների պատերին պատկերված բուրգաքանդակ արծիվները։

Արծվի պատկերը մեծ չափերով օգտագործված է նաև հայկական մանրանկարչության և ընդհանրապես զարդարվեստի մեջ։

Միջնադարյան Հայաստանի մի քանի իշխանական տոհմերի զինանշաններ եղել է արծիվը (Արծրունիներ, Պռոշյաններ և ուրիշներ)։

Ճարտարապետական հուշարձանների, կոթողների և մանրանկարչության մեջ հաճախ է հանդիպում նաև պատկերված երկգլխանի արծիվը. այսպես օրինակ, Թումանյան գյուղի բարձրաքաշ Ս. Գրիգոր եկեղեցու զավթի պատին, Իմիրզիկի եկեղեցու բարձրաքանդակներում և այլն։ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 206 ձեռագիրը Ավետարանի (Աւետարան ըստ Յովհաննու) վերևում պատկերված է երկգլխանի արծիվ։

Կրծքի պանակե-արծիվը պետք է լիներ չափազանց համաչափ։ Մեկ գլխանի արծիվը չէր բավարարում այն պահանջներին, որոնք հարկավոր էին։ Ուստի ելնելով վերոհիշյալ այն հանգամանքից, որ հայ արվեստի մեջ հաճախ է հանդիպում երկգլխանի արծիվը և միևնույն ժամանակ նախորդ կաթողիկոսները կրում էին պանակե-արծիվներ, նույնպես երկգլխանի, բայց իրենց ծագումով և արվեստով ոչ հայկական, այս նոր պանակե-արծիվը նախագծվեց և պատրաստվեց հայկական ոճով։

Արծվի նախագիծը պատրաստել է շնորհալի ճարտարապետ-նկարիչ Բ. Արզումանյանը։

ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՎԻՐԱՆ ԱՐՍԱԹՅԱՆ ԱՓՈՒՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆԿԱՐՈՎ ԳՈՐԳԸ

Վեհափառ Հայրապետի հոբելյանի առթիվ ստացված նվերների մեջ է նաև Ս. Էջմիածնի նկարով գորգը, որը սրտագին նվերն է Շիրակի թեմի հոգևորականության։

Գորգը գործել են գորգերի մասնագետ և նկարիչ, Ռումինիայից ներգաղթած Տիգրան Մայյանը և Լենինականի անվանի գորգագործ Գայանե Մկրտչյանը, որոնք աշխատում են Լենինականի գորգագործ արտելում։

Գորգի ֆոնի վրա գծագրվել է սպիտակափառ Մասիսը, վերևում պլպլում է Լուսավորչի կանթեղը, առաջին գծի վրա պատկերվել է Ս. Էջմիածնի Մայր Տաճարը։ Գորգի եզերքները նաշխվել են հայ ճարտարապետության և մանրանկարչության գեղեցիկ նմուշներով։

Գորգի բարձրությունն է 2,10 մ., լայնքը՝ 1,35 մ.։

ԱՐՄԱԹՅԱ ԴՐՎԱԳՎԱԾ ԱՓՍԵՆ

Վեհափառ Հայրապետի հոբելյանի առթիվ Իրանի հայերը ուղարկել են իրենց սրտագին նվերը՝ արծաթյա թանկարժեք մի ափսե, վեց բաժակակալներով։

Ափսեն և բաժակակալները գեղեցկորեն դրվագված են և հանդիսանում են ոսկերչական արվեստի շատ նուրբ և արժեքավոր մի նմուշ։



ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ՄԵՑՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի օր, մեծ հանդիսությամբ նշվեց նախավկա և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում։

Այդ օրը, սարկավագների տոնի առթիվ, Հոգևոր Ճեմարանը փակ էր։

Նախապես Մայր Աթոռի սարկավագները իրենց ժողովում, օրվա եկեղեցական երգեցողություններն ու հանդիսությունները կազմակերպված անցկացնելու համար, բուրվառակիրներ ընտրեցին արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանին և Տ. Հովհաննես քահանա Մարուքյանին։ Պատարագելու հրավիրվեց Մայր Աթոռի փոխ-լուսարարապետ հոգաշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։ Երկու դասերի ավագ դասապետներ նշանակվեցին բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը և Ժիրայր սարկավագ Ճերեճյանը։

Մայր Աթոռի սարկավագները իրենց մեջ բաժանեցին Ս. Ստեփանոսին նվիրված շարականների կանոնի Օրհնության՝ «Նահատակ բարի Քրիստոսի» և Հարցի՝ «Ընդ երկնային հոգեղինաց դասքն» հոգեզմայլ մեներգները։

Չորեքշաբթի օրը, ժամը 5-ին, սկսվեց երեկոյան ժամերգությունը։ Մայր Աթոռի ողջ միաբանությունը ներկա էր նախատոնակի հանդիսավոր ու հոգեզմայլ արարողությանը։

Հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 8-ին, սկսվում է առավոտյան ժամերգությունը։ Ներկա են ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։

Սարկավագները աշխույժ ու ոգևորված կատարում են օրվա տոնի երգեցողությունը։

Դարավոր Տաճարի նվիրական կամարների տակ, խորհրդավոր ու հոգեգրավ լռության մեջ, լսվում են միայն աղոթքի ու երգի քաղցր բառերն ու եղանակները։ Միաբանության և հավատացյալների աղոթքի մրմունջները խնկի բուրումնավետ ծվենների հետ բարձրանում են առ Աստված՝ քարերի տակ սպանված մեծ նահատակ Ս. Ստեփանոսի խնկելի հիշատակի վերակոչումով։

«Փառք ի բարձունս»-ից առաջ Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է եկեղեցի։

Տ. Հակոբ և Տ. Հովհաննես բուրվառակիր քահանաների առաջնորդությամբ սարկավագները, սաղմավարտ ի գլուխ, բուրվառներով և խնկի տապանակներով դուրս են գալիս Մայր Տաճարի ավանդատնից և ըստ ավագության կարգի շարվում են Իշման Ս. Սեղանի առաջ ու հանդիսավոր և ծանր երգում են «Փառք ի բարձունս»-ը։ Վերջում Վեհափառ Հայրապետի օրհնության վրա երեք անգամ խնկարկում են բոլորը միասին։

Առավոտյան եկեղեցական հանդիսավոր արարողությունների վերջին պահն է։ Սարկավագները, տպավորիչ ու ներդաշնակ, երգում են Մանկունքը՝ «Նախասարկաւագ և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս»։

Ապա, խորհրդավոր լռության մեջ, լսվում է Վեհափառ Հայրապետի ձայնը, որը «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի մեջ ոգեկոչում է Ս. Ստեփանոսի հիշատակը, որպեսզի մեծ մարտիրոսի հավատով ու ոգով զինվեն իր հոգևոր որդիները՝ Մայր Աթոռի միաբան սարկավագները։ Ամբողջը միաբերան

իրենց «ամենա»-ներով ձայնակցում են Վեհափառ Հայրապետի սրտագին մաղթանքներին։

Հավարտ առավոտյան ժամերգության, սարկավագները, բոլորված Վեհափառ Հայրապետի շուրջ, լսում են նրա հայրական խոսքն ու շնորհավորությունները, իրենց տոնի ոսոթիվ։

Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին և բարեմաղթում, որ Ս. Ստեփանոսի «գին և հավատը միշտ վառ մնան Մայր Աթոռի երիտասարդ միաբանների սրտերում։

Սկսվում է պատարագը։ Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում է Հոգևոր Ճեմարանի երգեցիկ քառաձայն խումբը, զեկավարությամբ բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանի։

Հավարտ սուրբ պատարագի, սարկավագները, հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Մեսրոպ վարդապետների գլխավորությամբ, առաջնորդվում են Վեհարան, Նորին Ս. Օծության Հայրապետական օրհնությունն ստանալու իրենց տոնի առթիվ։

Ժամը 3.30-ին, վանքի միաբանական սեղանատանը, տրվում է ճաշկերույթ ի պատիվ սարկավագների։

Ճաշկերույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը օրհնում է սեղանը։

Հրավիրյալների թվում են ողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը։

Սեղանատան մեջ խանդավառ մթնոլորտ է տիրում, հոգեկան խոր ուրախության մեջ են սարկավագները, ներքին ապրումները փոխորկել են նրանց հոգիները։ Նրանք զգում են կրակե բառերով, հրեղեն պատգամներով իրենց ուսերի վրա դրված լծի ամբողջ ծանրությունն ու քաղցրությունը։

Ճաշի ընթացքին խոսք է առնում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և Մայր Աթոռի միաբանության անունից շնորհավորում սարկավագների տոնը։ Հոգևոր Ճեմարանի տեսչության անունից սարկավագներին սրտագին շնորհավորում է փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։

Սարկավագների կողմից կատարվում են արտասանություններ, մեներգներ, խմբերգներ և ուղերձներ։

Ուրարակիր Հովհաննես Եղիայանը ոգևորությամբ արտասանում է Վահան Թեքեյանի «Եկեղեցին Հայկականը», Սարգիս սարկավագ Սարգսյանը՝ Վահե Վահյանի «Հայրենի երգ» բանաստեղծությունը, իսկ Հակոբ սարկավագ Պողոսյանը երգում է «Սիրանի ծառը»-ը։ Բարեշնորհ Կարապետ սարկավագ Բենյյանը հանդես է գալիս իր հետևյալ ուղերձով.

«Քրիստոսի հիմնած Ս. Եկեղեցին, իբրև աստվածադիր Ս. Հաստատություն, իր կազմավորման առաջին իսկ օրից, անհրաժեշտություն է զգացել անձնուրաց և նվիրյալ մարդկանց, որոնք իրենց նահատակությամբ ապացուցել են քրիստոնեական կրոնի աստվածային և համամարդկային բնույթը։ Իզուր չէ ասված՝ «արիւն մարտիրոսաց սերմն քրիստոնէից»։

Եկեղեցու առաջին մեծ սրբերը, հին հեթանոս աշխարհի դեմ պայքարելիս, տարված, հարբած էին Քրիստոսի վսեմ իդեալներով և ճշմարտություններով։ Նրանք անձնուրացությունից և հավատից բացի ոչինչ չունեին։ Հին աշխարհը նրանց հալածեց, սակայն նրանք չվհատվեցին, որովհետև հաստատ համոզված էին, որ իրենց հետ է ինքը Քրիստոս։ Նրանք նահատակվեցին, սակայն դարերը խոնարհվեցին նրանց սուրբ նահատակության և քարոզության առջև։ Եվ առաջին անձը, որ հանուն ճշմարիտ կրոնի իր կյանքը նվիրեց և իր արյունը թափեց, եղավ առաջին մարտիրոս և նախավկա սարկավագ Ս. Ստեփանոսը, որի խնկելի հիշատակն է, որ փառաբանում ենք այսօր Մայր Աթոռում։ Ս. Ստեփանոսի նահատակության ոգին վառ մնաց հետագա քրիստոնյա սերունդների հոգում։

Եվ մենք, Վեհափառ Հայրապե՛տ, Մայր Աթոռի սարկավագներս, որ եկել ենք այս սուրբ հաստատության մեջ ծառայելու մեր Ս. Եկեղեցուն և Ազգին, մեր միակ պաղատանքն է ամենակարող Աստծուն, որ Նա պարգևներ բաշխի մեզ և Ս. Ստեփանոսի հավատից մեկ շիթ կաթեցնի մեր հոգիների մեջ, որպեսզի կարողանանք արդարացնել այն բոլոր հույսերը, որ Ձերդ Սրբությունն է սպասում մեզանից, լավագույնս ծառայելու համար մեր Ս. Եկեղեցուն, Մայր Աթոռին, Ձերդ Վեհափառության և Ձեզմով՝ մեր ժողովրդին ու Հայրենիքին։

Ապա, հանուն Հոգևոր Ճեմարանի ուսանողության, ջերմ և եղբայրական խոսք է ասում Ա լսարանի ուսանող Կարապետ Սուքիասյանը՝ շնորհավորելով իր սարկավագ եղբայրների տոնը։ Հետո, ի դիմաց սարկավագների, Սանդրո սարկավագ Բեհրությանը սրտագին խոսքերով շնորհակալության և երախտագիտության խոսք է ասում.

«Վեհափառ Տե՛ր, սրբազան հայրե՛ր և սիրելի սեղանակիցնե՛ր. չեք կարող պատկերացնել, թե այս բոլորիս մեզնից ամեն մեկը ինչքան է հուզված և ոգևորված։ Այս բոլորը, որ կատարվում է այսօր տոներու հա-

մար հիշատակը մեծ սրբի և ի պատիվ մեզ, բախտավոր սարկավագներիս, ինչո՞վ կարող ենք հատուցել, եթե ոչ կրկնել մեր ուխտը և ասել, թե փոխարենը մենք միայն մեզ կարող ենք նվիրել այս սուրբ ու դարավոր հաստատությանը, մեր ամբողջ կարողությամբ, մեր բոլոր երազներով ու հույզերով։

Ճիշտ է, մինչև հիմա մենք ոչինչ չենք կարողացել անել, որպեսզի կարողանայինք վստահեցնել Ձեզ մեր անպայմանավոր նվիրվածության ու հնազանդության վրա, սակայն վստահ եղեք, Վեհափառ Տե՛ր, որ Ս. Գրիգորի, Ս. Սահակի, Ս. Նարեկացու հավատը անխախտ է մեր մեջ և այդ հավատը ամեն օր նորոգվում ու աճում է Ձերդ Վեհափառության սուրբ և կենարար օրհնությամբ և մեր ամենօրյա աղոթքով։

Վեհափառ Տե՛ր, մենք զգում ենք մեր կոչման վեհությունը և մեր ուժերի տկարությունը, բայց ամենակարողն Աստված թո՛ղ զորավիգ լինի մեզ, որպեսզի մենք մեր կոչման մեջ հաստատ ու անխախտ մնանք և պարզ ճակատով ապրենք Ձերդ Վեհափառության և հայ հավատացյալ ժողովրդի առաջ։

Վեհափառ Տե՛ր, այսօր ոչ միայն մեր ինը սարկավագներիս տոնն է, այլ նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բոլոր սարկավագների տոնը, այսօր նրանց հոգիներն էլ են մեր հոգիների պես ցնծում։ Թույլ տվեք խոնարհաբար խնդրել Ձերդ Վեհափառությանը, որպեսզի մեր հնազանդության ուխտի վերանորոգման այս տոնին, օրհնեք հեռավոր և մոտակա բոլոր սարկավագներիս։ Թո՛ղ Աստված երջանիկ ու երկար տարիներ պարգևի Ձեզ, ինչպես նա՝ Ձեր արդյունավոր ղեկավարությամբ և Ձեր հայրական առաջնորդությամբ ծլի ու ծաղկի Հայ Եկեղեցին, որի ներկան է փառավոր և ապագան՝ լուսապայծառ։

Վեհափառ Հայրապետի հուզիչ ու խրատական պատգամից հետո ճաշկերույթը վերջանում է «Պահպանիչ»-ով ու «Հայր մերդ»-ով։

Հոգևոր ճեմարանի վերատեսուչ Գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը անհանգստության պատճառով չկարողացավ մասնակցել իր սիրելի սարկավագների տոնի հանդիսություններին։

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ



ԵՄՍՆՈՐԻ ՀԵՆԴԻՍԸ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆԻՄ

1958 թվականի վերջին օրն է, դեկտեմբերի 31-ը, չորեքշաբթի։

Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, գոհացուցիչ արդյունքներով վերջացրած ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննությունները, Ճեմարանի հանդիսությանց սրահում, ամանորի ավանդական սեղանների շուրջ բոլորված, հրաժեշտ է տալիս անցնող 1958 թվականին և նոր եռանդով, նոր հույսերով, հոգեշահ խոհերով և աղնիվ ցանկություններով դիմավորում է նոր տարին, 1959 թվականը։

Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի և Մայր Աթոռի միաբանության ամբողջ կազմով, ժամանում է Հոգևոր Ճեմարան։

Դահլիճում ուրախ են բոլորը։ Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռնված սեղանների շուրջ հավաքված են ավելի քան 150 հոգի՝ միաբան, ուսանող, պաշտոնյա և բանվոր, իրենց պարտքը կատարած մարդկանց գոհունակությամբ և արդար խղճմտանքով, ինչպես նաև սիրով և երախտագիտությամբ առլցված՝ դեպի համազգային այդ սուրբ հաստատությունը, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է և դեպի նրա Գահակալը, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

Ամանորի ավանդական սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։

Ապա հոտնկայս ունկնդրվում է Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագը։ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ Տ. Հայկազուն սրբազանը ղեկավարում է նոր տարվա սեղանը։

Ճեմարանի դահլիճում ամանորի առթիվ կազմակերպված այս երեկույթը ուներ նաև գեղարվեստական բաժին։ Երեկույթը բանալով, վերատեսուչ սրբազանը ասում է.

«Սուրբ Հայրապետ. ինչքա՞ն խորհրդավոր է պահը, և որքա՞ն քաղցր պարտականությունը՝ բացումը կատարել այս շեն ու շքեղ սեղանին։ Եթե պահ մը տխրություն կպատեմեզ, պատմության հանձնելու համար 1958 տարին, մյուս կողմե սակայն, ուրախությունը կունենանք ողջունելու նոր տարին իր շենշող հույսերովը ու երազներովը։ Մերը եղավ անցնող տարին իր շատ մը երեսներովը։ Մայր Աթոռի, Հայ եկեղեցիին, մեր ժողովուրդին և մեր Հայրենիքին համար բեղմնավոր տարի մը եղավ ան։

Տարիներու թիվը չէ, որ կշափե արժեքը մարդկային գործունեության։ Երբեմն ժամ մը կամ օր մը ամբողջ շրջան մը կարժևորեն։ Անցնող տարին Մայր Աթոռիս համար մասնավորապես բեղմնավոր տարի մը եղավ։ Չկասեցավ երբեք Մայր Աթոռի մեջ աշխատող մեքենան իր շինարարական, կրթական, եկեղեցական-վարչական երեսներուն վրա։ Հոգեկան մեծ ուրախությամբ և երախտագիտությամբ տոնեցինք Ձերդ Ս. Օծության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը։

Այս պահուս, Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը երախտագիտությամբ և շնորհակալությամբ կհիշե այն բոլոր ղեհողու-

թյունները, զորս կընեն Ձերդ Սրբութիւնը Հոգևոր Ճեմարանի համար, Գերագույն Հոգևոր Խորհուրդի հետ միասին։ Կշնորհավորենք Ձեր, Գերագույն Հոգևոր Խորհուրդի և Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի անդամներու նոր տարին, հայտնելով մեր սրտի անկեղծ զգացումները։ Մեր սրտագին շնորհավորութիւնները նաև Մայր Աթոռի բովանդակ պաշտոնեութիւնն։ Ի դիմաց Հոգևոր Ճեմարանի ամբողջ ուսուցչական կազմի և ուսանողութիւնի, կբերենք մեր անխառն սերն ու երախտագիտական մաքուր զգացումները առ ոտս գահոյիցդ, և բազկատարած կաղոթենք Աստուծո, որ երկար և երջանիկ տարիներ պարգևե Ձերդ Ս. Օծութիւն՝ ի պայծառութիւն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և ի շինութիւն Հայաստան աշխարհի։

Այս անդրանիկ բաժակը կաղանդի երեկոյան, ի դիմաց Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմի և ուսանողութիւնի, հոտնկայս կխմենք Ձեր թանկագին կենացը, Աստվածարյալ Ս. Հայրապետ, բացված հայտարարելով կաղանդի այս սեղանը։

Բոլոր ներկաները հոտնկայս բաժակ են բարձրացնում Վեհափառ Հայրապետի կենացը, ծափերի զվարթ հնչյունների տակ։ Ամբողջ դահլիճով մեկ, վեհ ու հանդիսավոր հնչում է Մայր Աթոռի հոգևոր հիմնը՝ «Էջ Միածին ի Հոր»ը շարականը։

Ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ընտանեկան մթնոլորտ։ Հոգևոր Ճեմարանի ուսանողական երգչախումբը երգում է ցնծագին «Սեղանն է առատ» ժողովրդական երգը։ Բ լսարանի ուսանող բարեշնորհ Սարդիս սարկավագ Սարգսյանը, հանուն իր սարկավագ եղբայրների, կարդում է մի գեղեցիկ ուղերձ Վեհափառ Հայրապետին ուղղյալ, երախտագետ զգացումներով և կրոնարույր խոհերով հագեցված, նոր տարվա շնորհաբեր և բերկրարիթ գալստյան առթիվ։ Ա լսարանի ուսանող Կարապետ Սուքիասյանը, Հոգևոր Ճեմարանի ուսողության անունից, սրտագին շնորհավորում է Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռի միաբանության, դասախոսական կազմի և բոլոր ներկաների նոր տարին։

Ոտքի վրա է Վեհափառ Հայրապետը։ Խորապես հուզված, նոր տարվա հատուկ խոհերով և դալիք օրերի պայծառ լավատեսությամբ համակված, բաժակ է բարձրացնում Մայր Հայրենիքի, նրա զեկավարների և բովանդակ հայ ժողովրդի կենացը։ Վեհափառ Հայրապետը խոսում է հավատով, լավատեսությամբ, մեր Երկրի և ժողովրդի պայծառ ապագայի մասին։ Նրա խոսքերը բխում են անկեղծ հայրենասերի բոցավառ սրտից։ Յպավորիչ ու ազդու են Նրա խոսքերը։ Ամբողջ դահլիճը հոտնկայս ծափահարում է, բաժանելով Վեհափառ Հայրապետի խոսքերն ու զգացմունքը։

Ընդունելության ժամանակ ջերմ, հայրենասիրական, եկեղեցասիրական հուզիչ ելույթներ են ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները՝ Սահակ սրբազանը, պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյանը, դոցենտ Ա. Յիրացյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, Մայր Աթոռի Տնտեսա-ֆինանսական վարչության պետ Հ. Սեդրակյանը և ուրիշներ։

Ճեմարանի երգչախումբը երգում է «Նոր տարին», Ա դասարանի ուսանող Երեմ ժամկոչյանը արտասանում է Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի «Գոհությունն ի վերջ տարւոյ» գրաբար բանաստեղծությունը։ Գ դասարանի ուսանող Աղատ Տերտերյանը երգում է «Գարունն» երգը։ Գ. Սարյանի «Օրացույցը» բանաստեղծությունը հստակությամբ արտասանում է Գ դասարանցի Կարպիս Սերայտարյանը։ Գ լսարանի ուսանող բարեշնորհ Ժիրայր սարկավագ Ճերեճյանը ապրումով արտասանում է Դանիել Վարուժանի «Անդաստան»-ը, իսկ Բ լսարանից Հակոբ սարկավագ Պողապալյանը հաջող կերպով մեներգում է «Իմ երգը»։ Ապա Կարապետ, Հակոբ և Պետրոս սարկավագները և ուրարակիր Խորեն Մելխանեջյանը կատարում են «Զոն Վեհափառ Հայրապետին» երգը, անվերջ ծափեր խլելով ներկաներից։

Ուրախ սեղանների շուրջ ժամերը անցնում էին արագ, բայց բովանդակալից ապրումներով, հույզերով, խոհերով ծանրաբեռնված։

Վերատեսուչ սրբազան հոր հրավերով ոտքի է կանգնում Վեհափառ Հայրապետը՝ Իր Հայրապետական օրհնությունը և նոր տարվա պատգամը տալու բոլոր ներկաներին և նրանց միջոցով բովանդակ հայության։

Ընդհանուր խանդավառության և ծափերի տակ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը։

Նորին Ս. Օծությունը հայրական իմաստալից խրատականներ տվեց միաբանության, ուսանողության, վանքի պաշտոնեության՝ հավատով, խանդավառությամբ աշխատելու, գլուխ բերելու համար Մայր Աթոռի առաջ կանգնած կարևոր գործերի, ազգային ծրագրերի իրագործումը, հոգեպես և իմացապես աճելու, վերանորոգվելու համար, լավագույնս ծառայելու Մայր Աթոռին, մեր Հայրենիքին և ժողովրդին։ Վեհափառ Հայրապետը Իր եռանդով, լավատեսությամբ խանդավառեց, դոտեպնդեց մի անգամ ևս բոլորին՝ ձեռք-ձեռքի տված աշխատելու միասին հոգուտ

Մայր Աթոռի։ Վերջում Վեհափառ Հայրապետը սրտագին ու լեռմ բարեմաղթություններ արեց Մայր Հայրենիքի բարգավաճման և բովանդակ աշխարհում խաղաղության հաղթանակի համար։

Վեհափառ Հայրապետի խոսքերը, խրատական պատգամը խորապես հուզեցին բոլոր ներկաների սրտերն ու մտքերը, տպավորվելով անջնջելիորեն նրանց յուրաքանչյուրի հիշողության մեջ։

Վեհափառ Հայրապետը նոր տարին, 1959 թվականը դիմավորեց Հոգևոր Ճեմարանի դահլիճում, Մայր Աթոռի միաբանների և Ճեմարանի ուսանողների՝ Իր երեց և կրտսեր որդիների հետ, բազմած ամանորի նույն սեղանների շուրջ։

Ուշ գիշերին, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջացավ նոր տարվան նվիրված այս նշանակալից հավաքույթը։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՀԱԼԵՊ

Ամենայն Հայոց շնորհազարդ Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա-ի ծննդյան հիսնամյակին և դահակալության Գ տարեդարձին նվիրված հոբելյանական փառաշուք հանդիսությունը տեղի ունեցավ 9 նոյեմբեր 1958 թվականին, կիրակի երեկոյան ժամը 8-ին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նորակառույց սրահին մեջ։

Սույն հանդիսությունը կազմակերպված էր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Հայ երիտասարդաց ընկերակցության և Թեքեյան մշակութային միության վարչության, նախաձեռնությամբ և հովանավորությամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության տեղական մասնաժողովին։

Կնախագահեր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Սուրիո շրջանային հանձնաժողովի նախագահ Տիար Արմեն Մազլումյան։

Հալեպահայությունը թեպետ կենդանի աչքերով չվայելեց Ամենայն Հայոց շնորհազարդ Կաթողիկոսը, արտասահման տված իր այցելություններուն ընթացքին, սակայն արժանացավ վեհին երկնատուր շնորհին. հոգևին հաղորդվելով Անոր պատգամներուն։

Ժամը 8-ին սրահը լեցված է արդեն հրավիրյալներով։ Պատկառելի լռության մեջ կհնչեն Արաբական Միացյալ Հանրապետության զույգ քայլերգները, որմե հոգ վարագույրը կբացվի։ Թեմին ճիշտ կեդրոնը զետեղված են Արաբական Միացյալ Հանրապետության նախագահ Գամալ Արդել Նասերի նկարը և հոբելյար Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա-ի մեծադիր նկարը, նվիրված Հայկական Բարեգործության Ընդհանուր Միության ազնիվ նվիրատվությամբ, Ս. Էջմիածնի հալեպահայ բարեբարտեր և տիկին Սուրեն Գալենտերի։

Ամենայն Հայոց Հայրապետի նկարին շրջանակը եզերված էր կարմիր ժապավենով, որուն վրա մակագրված էին սիրո և հիացումի նշանաբաններ՝ նվիրված Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա-ի ծննդյան հիսնամյա և դահակալության եռամյա տարեդարձներուն։

Հոբելյանական հանդիսության բացումը կատարեց Թեքեյան մշակութային միության ատենապետ տիար Հակոբ Տեյիրմենճյան և հանուն հալեպահայ հավատացյալ ժողովուրդին, Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ին մաղթեց արդյունավոր արեշատություն և պայծառություն՝ հավատքի խորան Ս. Էջմիածնին։

Պր. Հակոբ Պարսումյան ապրումով արտասանեց Վ. Թեքեյանի «Հեկեղեցին Հայկանոց»-ը, որմե ետք օրիորդ Եղիսաբեթ Քեշիշյան մեներգեց Վ. Պետելյանի «Աստուծոյ»-ն, զգացումով և ապրումով։ Ապա տիմ հրավիրվեցավ օրվան առաջին բանախոսը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Լազար-Նաճարյան կեդրոնական վարժարանի տնօրեն տիար Երվանդ Ակիշյան. որ գեղեցկորեն ներկայացուց հոբելյար Վե-

հին համբուրելի մեծագործությունը և պայծառորեն ցայտեցուց առաքինազարդ ալացքները Ամենայն Հայոց Հայրապետին անձին։ Ընդմեջեն անբասիր Հովվապետը, հայրենասեր Կաթողիկոսը, արվեստագետ-գրագետ եկեղեցականը, հուակ ապա հայ լեզվի և մշակույթի մեծոգի սատարողը։ Ապա ներկայացուց Վեհին ամբողջական կյանքը իր մանկութենեն մինչև գահակալությունը։

Ապա ընդհանուր գիծերուն մեջ, հարգելի բանախոսը ներկայացուց Վազգեն Ա-ի արդեն իրագործած և իրագործելի ծրագիրները։

Ջութակի վրա տիար Հովհաննես Ջամսարյան նվագեց Ա. Սաթյանի «Արդյոք գիտե՞ս դուռ»-ն, դաշնակի ընկերակցությամբ օրիորդ Սալբի Տեր-Ղազարյանի։

Շնորհալի արտասանող օրիորդ Անահիտ Մոմճյան խորունկ ապրումով արտասանեց Հայկ Պարիկյանի «Հայաստանի Արծիվ»-ը՝ Վեհափառ Վազգեն Ա-ի ծննդյան հիսնամյակին և գահակալության Գ տարեդարձին նվիրված։

Ապա բեմ հրավիրվեցավ օրվան երկրորդ բանախոսը՝ Մեթր Ռուբեն Պողոսյան՝ տալու իր տպավորությունները Վեհափառի հոբելյանական հանդիսություններեն։ Հարգելի բանախոսը ներկաները փոխադրեց հայ հավատքի կեդրոն Ս. Էջմիածին և իր համակրելի ձայնին ու հուզումին ելևէջներովը մեզ հաղորդակից դարձուց Ամենայն Հայոց Հայրապետին մեծասիրտ, բարության տիպար և երկնառաք հոգին ու անոր սրբազարծ անձին մեջ տվավ Վազգեն Ա-ի առաքինի կյանքի կշիռը։

Ինչ որ անմոռանալի հիշատակ մը պիտի մնա այս հիսնամյա հանդիսութենեն, այդ ալ ապահովաբար հայ հոգիին վերերևումն էր հազարավոր շրթներե միաձայն բացականչությամբ «Ամեն, ամենա»-ներու, երբ հարգելի բանախոսը կվերջացներ իր խոսքերը՝ «Տերը անսասան պահե հավատքի խորան Ս. Էջմիածինը և տա արդյունաշատ ու քաջառողջ կենդանություն Ամենայն Հայոց Հայրապետին»։

Տիար Արրահամ Աշըգյան մենրգեց «Հովուապետ սուրբ և անքիծ» շարականը. խունկի և վերասլաց աղոթքի անփոխարինելի պահ մը ապրեցնելով հավատացյալներու հոգիներուն մեջ։

Օրվան երրորդ բանախոս արժանապատիվ Տ. Եղիշե քահանա Փանոսյան պանծացուց Հոբելյար Հայրապետին եռամյա գահակալության կարճ շրջանի «սոսքինացած գործունեությունը, դրսևորելով անոր մեջեն Նարեկացիներու հոգետախտակը։

Հայտագիրը իր ավարտին հասավ տիար Հովհաննես Ջամսարյանի (ջութակ) և օրիորդ Սալբի Տեր-Ղազարյանի (դաշնակ) Ա. Վիվարդիի ջութակի և դաշնամուրի համար գրած լա մինոր կոնցերտի կատարումով։

Հուակ ապա Վեհափառ Վազգեն Ա-ի-Հոբելյանական փառաշուք հանդիսությունը փակելե առաջ, տիար Հակոբ Տեյիրմենճյան կարդաց Նորին Ս Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի հեռագիր օրհնագիրը.

«Ամենաջերմ զգացմունքներով Ձեզ կիզեմ մեր սիրո ողջույնը և Հայրապետական օրհնությունը։ Ս. Էջմիածնի շնորհներով Տերը թող պահե-պահպանե մեր ժողովուրդը անփորձ ու միասնական խաղաղությամբ»։

Հավատացյալ ժողովուրդը, ծափերու տարափին տակ, հոտնկայս ունկնդրեց Ամենայն Հայոց Հայրապետի հեռագիրը։ Ապա շնորհակալության խոսքերեն ետք, սույն փառաշուք հանդիսությունը փակվեցավ։ Հանդիսականները մեկնեցան՝ անգամ մը ևս զորացած Ս. Էջմիածնի հավատքով։

ԹՂԹԱԿԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

Նոյեմբերի 16-ին, կիրակի օրը, Ալեքսանդրիայում, պատկառելի ազգային իշխանության կազմակերպությամբ, Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի հովանավորությամբ և Ալեքսանդրիայի պատկառելի քաղաքական ժողովի ատենապետ տիար Մարտիկ Զարպհանելյանի նախագահությամբ, մեծ հանդիսությամբ տոնվել է Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձը, Մոհամեդ Ալիի շքեղ սրահում։

Հոբելյանական հանդեսին ներկա են եղել ավելի քան 2 000 հավատացյալներ, զորոնք եկած էին իրենց հարգանքը և հավատարմությունը հայտնելու Ձերդ Ս. Օծության և Ձեր միջոցով հայ ժողովուրդի հավատքի կեդրոն Ս. Էջմիածնին»,— գրում է իր 19 նոյեմբեր թվակիր նամակում Ալեքսանդրիայի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետ Զինչինյանը։

Ողջույնի սրտագին խոսքերով հոբելյանական հանդեսը բաց է անում տիար Մարտիկ Զարպհանելյանը, ապա ամբողջ դահլիճով վեհորեն հնչում է «Էջ Միածին ի Հօրէ» Մայր Աթոռի հիմնը։ Պր. Մ. Նալբանդյանը հուզումով արտասանում է Վ. Թեքեյանի «Եկեղեցին Հայկականը»-ը։ Ապա տիկին Լ. Գար-

կայանը ապրումով մեներգում է «Հայրենի կարոտ»-ը (Վ. Սրվանձտյան) և «Մրմունջներ»-ը (Ս. Եսայենց)։ Օրիորդ Ս. Ուսճյանը փայլուն հաջողությամբ կատարում է դաշնակի վրա Ա. Բարաջանյանի «Պրելյուտ-էքսպրոմտ»-ը և Ա. Խաչատրյանի «Սրոր»-ը «Գայանե» բալետից։ Տիկ Ա. Հովիվյանը արտասանում է «Էջմիածին»-ը (Հ. Արամյանի), որից հետո հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետ Զինչինյանը «Եկեղեցականը և հոբելյար Կաթողիկոսը» բովանդակալից բանախոսություն է կարդում։

Ապա ներկայացվում է մի կենդանի պատկեր՝ «Ս. Էջմիածինն ու իր Հոբելյար Հայրապետը»։

Պր. Մ. Քյուփելյանի «Խոսք»-ից, Ն. Մամուրյանի արտասանությունից (Վ. Թեքեյանի «Վուսալորչի կանթեղը») և պր. Հ. Մամուրյանի երկու մեներգներից հետո («Ուռինս»—Դ Ղաղարյան և «Իմ երգը»—Գ. Ալեմշահ), հանդես է գալիս պր. Հ. Գարայանը «Օրվան խորհուրդը» թեմայի շուրջ բանախոսությամբ։

Հանդեսի վերջում տիկին Պոզաճյանը մեներգում է «Հայաստան» և երգվում է «Ուրախությունը» շարականը։

Հոբելյանական հանդեսի վերջում ընդունվում է հետևյալ ողջույնի հեռագիրը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին.

«Ազգանդրիս հայությունը հաճույքը և երջանիկ պատեհությունը ունեցավ Ձերդ Ս. Օծության ծննդյան 50-ամյա և գահակալության երրորդ տարեդարձները տոնելու 16 նոյեմբեր 1958-ին, քաղաքիս մեծ թատերասրահներեն Մոհամեդ Ալիի մեջ, ի ներկայության ժողովուրդի հոծ բազմության, որոնք իրենց հավատարմությունը և ջերմ զգացումները հայտնեցին Ձերդ Սրբության, ինչպես նաև Ձեր միջոցավ Ս. Էջմիածնի հանդեպ։

Ամենքս ալ կաղոթենք և կմաղթենք, որ Ամենակալն Աստված Ձերդ Ս. Օծության երկար, առողջ և արևշատ կյանք մը պարգևե՝ ի փառս Հայաստանյայց Ս. Եկեղեցվոյ։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԻՄԱՍՏԱՍԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ԲՈՐՈՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔԵՐԸ

Հայ բազմադարյան մշակույթն ունի նշանավոր շատ դեմքեր, որոնք իրենց համակողմանի գիտելիքներով ու հասարակական-մանկավարժական գործունեությամբ մեծ հռչակ են վայելել ոչ միայն իրենց ժամանակակիցների շրջանում, այլև հետագա դարերում։ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը (մոտ 1045 կամ 1055—1129 թ. թ.) դրանց շարքում իր պատվավոր տեղն է գրավում։ Նրա մասին հիացմունքով ու ակնածանքով են խոսում նրա ժամանակակիցներն ու կրտսեր սերնդի ներկայացուցիչները, ինչպես նաև հետագա դարերի մատենագիրները։

Հովհաննես Իմաստասերի համբավը, որպես մեծ գիտունի, իր ժամանակին դուրս է եկել Հայաստանի սահմաններից։ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Կարի յոյժ սիրէր զսա թագաւորն Վրաց Դաւիթ[1] ...այնքան, զի մինչ լսել զգալուստ նորա, յոտն առնէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն»[2]։

Հովհաննես Իմաստասերին շատ բարձր են գնահատել նաև նորագույն ժամանակների հայ անվանի բանասերներ Հ. Ղ. Ալիշանը, Հ. Գ. Զարբհանալյանը, Մ. Արեղյանը և ուրիշներ։

Ընդարձակ է եղել Հովհաննես Սարկավագի մտահորիզոնը։ Նա ունեցել է լայնախոհ ու պայծառ միտք, բազմակողմանի ու խոր զարգացում։ Նրանից մեզ հասած աշխատությունները բազմաբովանդակ են, վերաբերում են գիտությունների տարբեր բնագավառներին՝ մաթեմատիկային, տոմարագիտությանը, պատմագիտությանը, փիլիսոփայությանը, բարոյագիտությանը և այլն։

Սարկավագը հայտնի է եղել որպես փիլիսոփա։ Պատահական չէ, որ նրան տվել են «Իմաստասեր» մականունը։ Նա հայ փիլիսոփայական մտքի պատմության ակնառու ներկայացուցիչների կողքին գրավում է իր պատվարժան տեղը։

Իմաստասերը գտնում է, որ արարչագործությունից հետո արտաքին աշխարհում ամեն ինչ գոյություն ունի կամ արդեն որպես ռեալականություն, իրականություն՝ տեսանելի, շոշափելի, կամ ապագայում որպես այդպիսին դառնալու հնարավորություն։ Նա գրում է. «Երկու միայն են, որովք զլինելութիւն ամենայնի սովորեցին սահմանել... զգաւրութեամբ ասել և զներգործութեամբ։ Բացահայտելով այս միտքը, Իմաստասերը շարունակում է. «Եւ է զգաւրութեամբ արմատ իմն և սկիզբն ի ներգործութիւն գալ հանդերձելոցն։ Այսինքն՝ որ չեն է այն ինչ կամ թէ էութիւն զգալի, բայց կարութիւն է լինել

---

[1] Դավիթ Բ-ն. թագավորել է 1089—1125 թվականներին։

[2] «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 105։

յայնմանէ, որ ի լինելոցն է»[3]։ Այսպիսով, ըստ Իմաստասերի, բնության մեջ տեղի է ունենում հնարավորությունից իրականության, այսինքն՝ ծագման, առաջացման, շարժման անընդհատ պրոցես։

Բնության բոլոր իրերն ու առարկաները, համաձայն Իմաստասերի, որոշակի որակ ունեցող մարմիններ են և կազմված են տարրերից։ Տարրերն են «մասունք աշխարհիս» և բնության բոլոր առարկաները, անշուշտ թե շնչավոր, տարրերի խառնուրդ են որոշակի փոխհարաբերությամբ։ Փոփոխությունը իրերի և առարկաների մեջ տեղի է ունենում այդ տարրերի փոխհարաբերությունը փոխվելու շնորհիվ։

Հետևելով անտիկ որոշ փիլիսոփաների, Իմաստասերը ևս կանգնած է այն տեսակետի վրա, թե տարրերը չորսն են՝ օդը, հողը, ջուրը և կրակը։ Այս տարրերը իրարից տարբերվում են իրենց կշռով և ընդհանրապես իրենց հատկություններով տարբեր են, միմյանց ներհակ են, բայց «թէպէտ և հակառակ են իրերաց, այլ ի սոցանէ եղև աշխարհս»[4]։ Բնության չորս տարրերը երբեք միևնույն վիճակի մեջ չեն մնում. «Տարերքն շարժական և փոփոխական են»[5]։ Նրանք փոխակերպվում են մեկը մյուսին, այնպես որ մեկի «էութիւնից» գոյանում է մյուսը. «Տարերքն ի միմեանց էութենէ գոյանան, որպէս ի ջեռնուլ ջրոյ և ի շիջեալ հրոյ օդն լինի, նոյնպէս և ջուրն սկանալ և լինի հող, նոյնպէս և այլն»[6]։ Տարրերի այս փոխակերպումը կատարվում է իրենց՝ տարրերի բնությանը ներհատուկ օրինաչափությամբ, «ամենաքանչիւր տարր ըստ իւր բնութեանն շարժի՝ թեթևն ի վեր և ծանր ի վայր»[7], և անհրաժեշտորեն՝ «ի հարկէ թեթևքն քամեցան և ի վերին կոյսն ելին»[8]։

Ծանոթ լինելով անտիկ փիլիսոփայության նշանավոր դիալեկտիկ մտածողներին՝ Հերակլիտին, Արիստոտելին, Իմաստասերի հայացքներում նկատվում են դիալեկտիկայի որոշ տարրեր։ Ըստ Իմաստասերի, բնության մեջ ամեն ինչ գտնվում է շարժման, փոփոխման վիճակում և ունի իր սկիզբն ու վախճանը. «Ապականութիւն տնկակից է ամենայն իրաց, և՝ կենդանեաց, և՝ աճականաց, որոց և նուազելն շարժակցի»[9]։ Ոչինչ չկա աշխարհում, որ հավերժական լինի։ «Ինչ ցեղ չասեմ ապականացու զաշխարհս, այլ երազահանական առասպելացն հաւանիմ»[10],— ասում է Իմաստասերը։

Իմաստասերը խոսում է նաև բնության իրերի մեջ գոյություն ունեցող հակադրությունների մասին։ Այդ հակադրությունները գոյանում են իրար հակադիր տարրերից, որոնք հակադիր լինելով հանդերձ, գտնվում են միևնույն իրի մեջ, հակադիր լինելով՝ «սիրով» միանում են իրար. «Զկան այլ ինչ իրք, որ սիրեն զմիմեանս և միաբանին, որպէս մասունք աշխարհիս, որ են տարերքդ»[11]։ Հակադրություններն օրինաչափ ու անհրաժեշտ են բնության բոլոր առարկաների համար։ Ամբողջ բնությունը հակադրությունների ներդաշնակ միացում է, ինչպես քնարի բարձր ու ցածր լարերը միասին հնչելով հանում են միասնական ձայն, այնպես էլ հակադրությունները իրերի մեջ միանում են որպես ներդաշնակ միասնություն. «Բնութիւնն ամենայն իրաց ի յարմարութենէ ընդդիմակաց լինիցի, որպէս է տեսանել ի լարս քնարից, յորժամ սուրն և բութն ընդ իրար՝ միաբան հնչեն»[12]։

Իմաստասերը, սակայն, կանգ չի առնում իրերի մեջ գոյություն ունեցող հակադրությունների փաստի լոկ արձանագրման վրա։ Նա գտնում է, որ այդ հակադրությունները հիմք են հանդիսանում բնության իրերի փոփոխության համար։ Իրար հակադիր տարրերը, որոնք յուրաքանչյուր առարկայի մեջ հանդես են գալիս որոշակի փոխհարաբերությամբ, քանի դեռ իրի մեջ գտնվում են «չափաւորութեան», «բարեխառնութեան» վիճակում, ապա իրը պահպանում է իր գոյությունը, բայց երբ այն խախտվում է, իրը սկսում է քայքայվել։

Ըստ Իմաստասերի, բնության իրերը հակադրությունների միասնություն են, և այդ միասնությունը հարաբերական է։ Միասնությունը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ հակադրություններից՝ հակադիր տարրերից մի կողմը չի գերակշռել մյուսի նկատմամբ, չի «ճաղրանարել» մյուսին։ Այսպիսի գերակշռությունը բացարձակի հասնելուց հետո փոխվում է իրի գոյությունը։ Տարրերի «ի յաղրանարելն ի միմեանց, և ի

3 Ա. Աբրահամյան, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956, էջ 306։

4 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 246բ։

5 Նույն տեղում, էջ 278բ։

6 Նույն տեղում, էջ 260բ։

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում, էջ 246բ։

9 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 2751, էջ 224ա։

10 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 242բ։

11 Նույն տեղում, էջ 260բ։

12 Նույն տեղում, էջ 255ա։

առաջելոյն կամ ի պակասել բան զարեխառնոտեանն և զշափաւորութեանն ճարկ է վախճանել կենդանեայն»[13]։

Իմաստասերը գտնում է, որ բնության իրերն ու երևույթները գտնվում են պատճառական կապակցության մեջ և առանց պատճառի ոչինչ չինել չի կարող։ «Առանց պատճառի չկայ իրք, և ես քեզ վկայեմ,— գրում է նա[14]։

Իմաստասերը դեմ էր բնության երևույթների միստիֆիկացմանը և պայքարում էր սնոտիապաշտության ու առասպելարանության դեմ։ Նա բնության երևույթներն ու իրերն ուսումնասիրելու, քննելու, հետազոտելու պահանջ էր առաջադրում, և ընդունում էր աշխարհի ճանաչելիությունը և մերժում՝ ագնոստիցիզմը։

Իմաստասերը հետևողականորեն կանգնած է այն տեսակետի վրա, թե մարդը, ի տարբերություն գոյություն ունեցող բոլոր մյուս կենդանի արարածների, բանական էակ է, և միայն նա է, որ օժտված է բանականությամբ։ Մարդը ստեղծված է որպես բանական էակ, որպեսզի իր գոյության պահպանման համար կարողանա ճանաչել աշխարհը, նրա իրերն ու երևույթները։

Ըստ Իմաստասերի, ճանաչելու ունակությունը մարդու հատկանիշն է։ Մարդու բանականությունը ներքնապես ունի արտաքին աշխարհը ճանաչելու կարողություն, որը գիտելիքների է վերածվում այն ժամանակ, երբ մարդն ուսումնասիրում է իրեն շրջապատող աշխարհը։

Աշխարհը, նրա իրերն ու երևույթները, որոնք մարդուց անկախ, առարկայորեն գոյություն ունեն, ըստ Իմաստասերի, մարդ ճանաչում է բանականությամբ՝ զգայարանների միջոցով։

Աշխարհի իրերը և երևույթները ճանաչելու համար նյութը տալիս են զգայարանները. «Զորան մեր՝ մարմինս, և դուռն՝ զգայութիւնս, և նստել՝ միտքն»[15]։ *Մարդը տեսնելով, շոշափելով իրերը, ստանում է առաջին տպավորությունը նրանց մասին, սակայն, ըստ Իմաստասերի, բանականությամբ է, որ մարդ կարողանում է ճանաչել աշխարհը։ Սոսկ զգայությամբ հնարավոր չէ թափանցել բնության երևույթների, նրանց էության մեջ, իմանալ նրանց բազմակողմանիորեն. «Մտաց աչք յոլով տեսական զօրութիւն ունիս*[16]*, քան ինքը՝ աչքը։ Բացի այդ, բնության մեջ կան իրեր և երևույթներ, որ անմիջական զգայական ընկալման չեն ենթարկվում, այդպիսիք մենք իմանում ենք մտքի՝ «հոգւոյ ակամբքս», այսինքն՝ նրանց մասին մենք գիտենք բանականության միջոցով. «անմարմինքն հոգւոյ ակամբք տեսանին և ոչ ձեռօք շոշափին»*[17]։

Իմաստասերը մեծ տեղ է տալիս բանականությանը։ Նա գտնում է, որ առանց բանականության գործունեության զգայարանները պասսիվ են, նրանք իրենք արտաքին աշխարհից տպավորություններ են ստանում մտքի միջնորդության դեպքում միայն, իրենց «գործը» բաց են անում արտաքին աշխարհի առաջ այն ժամանակ, երբ այդ անելու համար զգայարաններին թելադրում է միտքը. «Միտքն որչափ ի յինքեան է և չէ ի զգայիսս՝ զգայութիւնքն հնազանդին նմա»[18]։ *Այստեղ Իմաստասերը պաշտպանում է այն տեսակետը, թե միտքը զգայության նկատմամբ ակտիվ է, իսկ զգայությունը պասսիվ է, ուստի առանց մտքի գործունեության, սոսկ զգայարաններով աշխարհի մասին դիտելիքներ ունենալ չի կարելի, ինչպես կինը չի կարող առանց տղամարդու երեխա ունենալ, այս պատճառով՝ «զգայութիւնքն է կին խորհրդոյն, զի խորհուրդն սերմանէ և զգայութիւնքն կրեն»*[19]։ *Սակայն, ինքը՝ միտքը ևս առանց զգայության տված տվյալների անզոր է, նա չի կարող «գործել», եթե զգայարանները նյութ չեն տալիս նրան։ «Զի միտքն,— գրում է Իմաստասերը,— զգալեօքն շարժի, վասն որոյ և չգործէր միտքն նախ քան զգալ»*[20]։ *Այսպիսով, Իմաստասերը պաշտպանում է զգայության և բանականության փոխադարձ պայմանավորվածության սկզբունքը։*

Մեծ տեղ տալով բանականությանը և միաժամանակ պատշաճ կերպով գնահատելով զգայարանների դերը ճանաչողության մեջ, Իմաստասերը մերժում է մեր գիտելիքների բնածին լինելու տեսակետը։ Գիտելիքները մարդուն տրվում են «ուսմանն» և «աշխատութեանն» միջոցով։ «Միայն բանականին է ունակական գիտութիւնն և արուեստ իմաստութեանն, զոր չունէր յառաջ և ուսմամբ եգիտ»,— գրում է նա[21]։

---

13 Հայկական ՍՍՌ Գետական մատենադարան, ձեռագիր Մ 2751, էջ 212բ (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։

14 Հայկական ՍՍՌ Գետական մատենադարան, ձեռագիր Մ 2595, էջ 247ա։

15 Նույն տեղում, էջ 268բ։

16 Նույն տեղում, էջ 268ա։

17 Հայկական ՍՍՌ Գետական մատենադարան, ձեռագիր Մ 2595, էջ 268բ։

18 Նույն տեղում, էջ 259ա։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, էջ 260բ։

21 Նույն տեղում, էջ 250բ (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։

Աշխարհի երևույթների և իրերի ճանաչողությունը մեկ անգամից չի տրվում, այն ձեռք է բերվում աստիճանաբար, դա տևական ուսումնասիրության արդյունք է։ Նրա կարծիքով՝ ամեն մի դիտություն զարգանում, ավելի ու ավելի կատարյալ տեսք է ստանում աշխատանքի ու հետաքննության միջոցով։ «Քանզի ամենայն մակացութիւն և արուեստ,— գրում է Իմաստասերը,— մի ըստ միոյիցն առ որ առաւելագոյն վարժմանէ և ջերմ աշխատութենէ աճեալ և գեղեցկանալ բնաւորեաց, նաև ուղղել սխալմանն՝ ի կըրթասիրութենէէ»[22]։

Իմաստասերը գտնում է, թե մարդկային գիտելիքների նկատմամբ արտաքին աշխարհն առաջնային է, անկախ է և նյութ է տալիս մեր իմացությանը։ Հասկացությունները, մեր մտքերը առարկաների ու երևույթների մասին, չեն կարող պայմանավորել նրանց գոյությունը, մինչդեռ, ընդհակառակը, իրերով ու երևույթներով պայմանավորված են մեր գիտելիքները, այսինքն՝ իրերն առաջնային են, իսկ մեր գիտելիքները ածանցվում են նրանցից։ Մարդը կարող է բազմաթիվ բաներ, մտքեր արտահայտել, ինչպես ասում է Իմաստասերը՝ «շաղակրատել», սակայն այդ չի նշանակում, որ դրանք անպայման ճիշտ են։ Ճշմարիտ կարող են լինել միայն այնպիսի մտքերը, որոնք համապատասխանում են իրականությանը, որոնց իսկությունը ստուգված է։ Իմաստասերը գրում է. «Քանզի աշխատութեան և տրքնութեան պէտք են՝ առ ի գիտել զստուգութիւն բանից, և իրաց, վասն զի ոչ բանն զիրս հաստատէ, այլ՝ իրն զբանն, որոյ սովոր են խնդրել զճշմարտութիւն։ Ապա ոչ է պարտ հայել ի բանիցն շաղակրատանս, թէպէտ և հաւանական թուեսցի։ Քանզի բանն նշանակիչ իրին է՝ չէ իրաւացի հակառակ իրացն արտաբերիլ, այլ միայն ճշմարտութեան հետևելոյ»[23]։

Մեր ըմբռնումները իրերի և երևույթների մասին կարող են փոխվել, սակայն դրանից իրերն ու երևույթները չեն փոխվում, որովհետև իրականությունն ինքն է մեզ մտքեր տալիս։ Մեր գիտելիքները, որոնք օբյեկտիվ աշխարհի արտացոլումն են, կարող են ճիշտ կամ սխալ, թերի կամ լրիվ լինել, մեր տրամաբանական կառուցումները աշխարհի մասին կարող են հավանական թվալ, բայց դրանից արտաքին աշխարհը համապատասխան փոփոխության չի ենթարկվում։ «այլ դի՞նչ աւգուտ բերէ բանիւն ոչ ասել իրին հաստատապէս կացելոյ,— գրում է Իմաստասերը,— քանզի եթէ ասէ բան և եթէ ոչ, իրն տեսեալ ունի զիւրութեանն իւրոյ յատկութիւն»[24]։ Ուստի միայն օբյեկտիվ աշխարհն է, որ կարող է հավաստել մեր միտքը։ Եթե միտքը ճիշտ է արտահայտում իրերի էությունը, առարկաների փոխհարաբերությունը, ապա նա ճիշտ է, իսկ եթե ոչ՝ սխալ է։ Այսպիսով, ըստ Իմաստասերի, ոչ թե մեր մտքերն են հաստատում ու բնորոշում իրականությունը, այլ օբյեկտիվ աշխարհն է հաստատում ու բնորոշում մեր մտքերը։ Մեր մտքերը ոչ այլ ինչ են, քան մարդուց անկախ, ռեալ գոյություն ունեցող աշխարհի արտացոլումը։ Իմացության բովանդակությունը օբյեկտիվ աշխարհն է։

Իմաստասերը ճանաչողության պրոցեսում մեծ տեղ է տալիս փորձին։ Հ. Ղ. Ալիշանը, հենվելով Իմաստասերի իրեն հայտնի աշխատությունների մտքերի վրա, գրում է. «Ինքն (Իմաստասերը—Գ. Գ.) ուսումնական բաներ սովրիլ և գրելու համար յայտնապէս կու պահանջէ, թէ ամենեքին բազմահմուտ պարտ է գոլ ձեռնարկողին այսմ, ոչ միայն սրբոց և Աստուածաշունչ գրոց, այլ և արտաքնոցս։ Ասկէ այլ դեղեցիկ և հաստատուն փիլիսոփայութեամբ կու պահանջէ, որ ուսումն կամ գիտութիւնն փորձով ալ ստուգուի. «Դարձեալ թէ և տոքօք կիրթ և վարժ, առանց փորձի՝ կարծիքն ճաւատարմանալ ոչ կարասցէ. և փորձն՝ ճաստատուն և անեղկբայ... վասն զի ոչ է պարտ միայն ճնազիտակ լինել այլ և իճնարաւ»[25]։

Գիտական ճշմարտությունների հասնելու խնդրում մեծ դեր է խաղում կասկածը, որի դեպքում պետք է դիմել փորձին և քննությանը՝ որպես մեր գիտելիքները ստուգելու հավաստի միջոցի։ «Զեմ յայնց դիւրահաւան,— գրում է Իմաստասերը,— որ առանց քննութեան հաւատամ ամենայն բանից և պարտիմ, զի առանց քննելոյ և փորձելոյ չէ պատեհ հաւանել ամենայն բանիցէ»[26]։

Իմացությունը, աշխարհի երևույթների և իրերի ճանաչումը, ըստ Իմաստասերի, ինքնաբավ պրոցես չէ, այն հետապնդում է պրակտիկ նպատակներ։ Նրա գլխավոր խնդիրն է մարդկանց դոյավիճակի բարելավումը։ Այս պատճառով՝ աշխարհի երևույթների ըմբռնումը ոչ միայն տեսական նշա-

22 Ա. Աբրահամյան, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 253։

23 Նույն տեղում, էջ 255 (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։

24 Նույն տեղում, էջ 253 (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։

25 Հ. Ղ. Ալիշան, «Ցուշիկք Հայրենեաց Հայոց», հատ. Բ, էջ 282 (ընդգծումն իմն է—Գ. Գ.)։

26 Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 250ա։

նակություն ունի, այլև՝ պրակտիկ։ Այսպես՝ սխալ ըմբռնումը վնասում է ոչ միայն հայրենասիրական ճշմարտությանը, այլև անձին, մարդուն։ «Ստությունն ոչ միայն ճշմարտության, այլև անձին ոսոխ է»,— գրում է Իմաստասերը[27]։

Որոշ հետաքրքրություն են ներկայացնում Իմաստասերի նաև բարոյագիտական հայացքները։ Բարոյագիտական հարցերին նա մեծ նշանակություն է տալիս և իր աշխատություններում հաճախ է անդրադառնում դրանց՝ առաջ քաշելով հասարակության, կյանքի հետ կապված խնդիրներ։

Բարոյագիտությանը նվիրած իր աշխատություններից մեծագույն մասում Իմաստասերը բարոյականության հարցերը ոչ միայն տեսականորեն է քննում, այլ պարսավելով հասարակության մեջ իշխող անբարոյական արարքները, հորդորում է մարդկանց բարոյական լինել. «քանզի ուր առաքինություն լինի, անդ խաղաղություն և խնդություն»[28]։ Հասարակության բարոյականությունը բարձրացնելու նպատակով, նա մեծ նշանակություն է տալիս մանուկ սերնդի դաստիարակության հետ կապված խնդիրներին։ Իր «Խրատք մանկանց» աշխատության մեջ, նա մանուկներին հորդորում էր լցված լինել «զերմ սիրով առ ամենայն մարդիկ և մանաւանդ առ կարաւոս և վշտացեալս, նալել և լինել վշտակից, ի բանտի և ի հիվանդութեան ոչ անտես առնել»[29], խուսափել, «զերծ մնալ «ի գողութենէ և ի կծծութենէ»[30], «ի չարաբանութենէ, ի բամբասանաց, ի հայհոյութենէ, ընդ վայրաբանութենէ, ի կատակերգութենէ, ի քսութենէ և յորոց այսց ազգակից են»[31]։

Իմաստասերը գտնում էր, որ մարդիկ պետք է համերաշխ ու խաղաղ ապրեն, սիրեն և փոխադարձորեն օգնեն միմյանց. «Մարդիկ պարտին ոչ միայն խառն բնակել, այլև սիրով միաբանել»[32]։

Իմաստասերը մարդասիրությունը շատ բարձր էր դասում, հավասարեցնում և նույնացնում էր այն աստվածասիրության հետ։ «Ազգակից են այս երկու առաքինութիւնքս միմեանց՝ աստուածասիրութիւնն և մարդասիրութիւնն»,— գրում է նա[33]։

Իմաստասերը բողոքում է տերերի, հարուստների կողմից իրենց ծառաների նկատմամբ անգութ, անմարդկային վերաբերմունքի, նրանց դաժան շահագործման դեմ. «զբաւոր մարդիկն ի վերայ տկարագունից ելանենն»[34]։

Նա դատապարտում է հարուստների այն կարծիքը, ըստ որի նրանք կարող են վարվել աղքատների հետ այնպես, ինչպես ցանկանում են։ «Այնոցիկ,— գրում է նա,— որ պայծառ և պատուական զգեստիւք զարդարեալ են զինքեանս ի քաղաքի և հպարտանան ի վերայ աղքատաց և ծառայեցուցանեն իբրև զձիս, ի դագաղս լծեն չարչարելով զնոսա, երկրպագեն ունայն կարծեացս»[35]։ Նա հասարակության մեջ գերադասում է սոցիալական միջին դրությունը։ «Համեստ հոգին,— գրում է նա,— ոչ ընտրէ զվերին ծայր բարձրութեանն և ոչ զառաւել ցածուն խոնարհելն, այլ զմիջակն»[36]։

Իմաստասերը խարազանում է հասարակական բացերը, բարոյական անկումը։ Նա ցավով է արձանագրում այն փաստը, որ մարդկանց մեջ սիրո, համերաշխության և եղբայրության, փոխադարձ օգնության, վստահության, ազնվության և ուրիշ դրական հատկանիշների փոխարեն, իշխում են երկպառակումն ու անվստահությունը, անգթությունը, խաբեությունը, բամբասանքը, եսասիրությունը, երեսպաշտությունը և այլն։ Ահա թե նա ինչ է գրում (բերում ենք նրա մտքերը մի փոքր ընդարձակ). «Սիրեսք մեր հանճարեղք և խորին առ նենգաւորութիւն միմեանց, իսկ առ իրս եղբայրութեան՝ վայելչականս և գովելիս ի ճշմարիտ կամաց յիմարութեամբ և ապուշ անգգամութեամբ խաւարեալք։ Ո՛չ վշտակցութիւն, ո՛չ հաղորդութիւն ի խնդութեան և ի փառաւորութեան անդամոց մերոց, կամ ի տրտմութեան գտանի երբէք ի մեզ, այլ հակառակաւքն խնդամք... Ատեմք միմեանց, որպէս թէ ոչ իցեմք անդամք իրերաց... Հեռ և նախանձ եմոյծ ի մեզ զանկարգութիւն և զամենայն իրս չարս»[37]։

Իմաստասերը հասարակության կյանքը բարոյական առումով բարելավելու պահանջ էր առաջադրում։ Նա կանգնած էր այն տեսակետի վրա, թե մարդը, ի տարբերություն կենդանիների, այնպես է կառուցված, որ նա կարողանա հոգալ ոչ միայն սոսկ իր կյանքի պետքերը, այլև առաքինի կյանք վարել։

Իմաստասերը գտնում է, որ մարդու հոգին բարոյականության առումով «հեռամասնեալ»

27 Հայկական ՍՍՌ Գետական մատենադարան, ձեռագիր № 2751, էջ 193ա։

28 Նույն տեղում, ձեռագիր № 2595, էջ 275ա։

29 Նույն տեղում, ձեռագիր № 7, էջ 103ա։

30 Նույն տեղում, էջ 102 ա։

31 Նույն տեղում, էջ 100բ—101ա։

32 Նույն տեղում, ձեռագիր № 2595, էջ 271ա։

33 Նույն տեղում, էջ 270բ։

34 Հայկական ՍՍՌ Գետական մատենադարան, ձեռագիր № 2595, էջ 265բ։

35 Նույն տեղում, էջ 262բ։

36 Նույն տեղում, էջ 259ա։

37 Նույն տեղում, ձեռագիր № 777, էջ 122բ—123ա։

է, ունի հետևյալ կարողությունները՝ «բանական, ցասմնական, ցանկական». ըստ Պղատոնի, մերոյս անձին՝ բանական, ցասմնական, ցանկական»[38]։ Ըստ որում, հոգու այս երեք կարողություններից յուրաքանչյուրին Իմաստասերը վերագրում է հետևյալ հիմնական բարոյական և անբարոյական հատկանիշները. բանականին՝ «խոհականութիւն» և «անկգամութիւն». ցասմնականին՝ «բարկացողութիւն», «հեղութիւն» և «արութիւն». ցանկականին՝ «զեղխութիւն ի շռայլութիւն», «ողջախոհութիւն և ժուժկալութիւն» «խոհականութիւն է... պատրաստական այնոցիկ որ առ ի բարեբաստութիւն գործակից լինին»[39], «գործ է խոհեմութեան ընտրել և որոշել զլաւն և զբարին, զհաճելին և զպարսաւելին, ի գործ արկանել զամենայն առաքինութիւնս և կենցաղավարելն ուղղապէս, ճանաչելն զժամանակն, հմտութեամբ վարելն բանիւք և գործովք, յիշել հմտաբար ի ժամու զպիտանացուսն»[40], «Հեզութեան բարութիւն է՝ կարելն համբերել ամբաստանութեան և արհամարհանաց և ոչ արագապէս արշաւել առ ի պատուհասն և ոչ դիւրաշարժ գոլ առ ի ցասնուլ, այլ առանց դառնութեան բարուց և առանց վիճմանց հաստատութիւն և խաղաղութեան բանս յանձին ցուցանելն»[41], «Արութիւն է՝ յաւժարելն մեռանել բարեօք, քան եթէ կալ ամաւթով և քաշասիրտ առ կիրս վշտացն լինելն»[42], «Ողջախոհութիւն է.... ոչ բաղձալ դիւրութեանց և վայելմանց և վատթարագոյն հեշտութեանցն»[43], «Ողջախոհութեան յատուկ է ոչ սխրանալ ընդ վայելչութիւնս և ընդ հեշտութիւնս մարմնականս, այլ գարշելի և խոտան համարել և երկնչել ի վատաթառութենէ։ Հեռանի դարձեալ ողջախոհութեան բարեկարգութիւն, մարդասիրութիւն, պարկեշտութիւն, պատկառանք»[44], «ժուժկալութիւն է... ըստ որում արգելուն միտքն զարձակումն առ խոտելի հեշտութիւնսն»[45] և այլն և այլն։

Իմաստասերը գտնում է, որ երբ մարդ ամբողջովին առաքինի է, բարոյական, ապա «բոլոր անձինն» բնորոշ են «արդարութիւն և ազատականութիւն և մեծահոգութիւն»[46], և ընդհակառակը, երբ մարդ առաքինի չէ, ապա «բոլոր անձինն՝ անիրաւութիւն և անապատականութիւն և փոքրոգութիւն»[47]։

Իմաստասերի բարոյագիտական հայացքներում ուշադրության արժանի է այն, որ նա մարդու բարոյական կամ անբարոյական լինելը չի որակում որպես նրան ի ծնե հատուկ, բնածին մի բան։ Խոսելով, օրինակ, անբարոյական մի շարք հատկանիշների՝ «ախտերի» մասին նա գրում է. «բայց վնասք ախտից ոչ ի սկզբանէ ընդ մարդոյն անկան ի ներքս, վասն որոյ և յոլովք ի մերոցն և դրեթէ ամենեքին իսկ ոչ բնաւորականս զսոսա զոյ ասացին»[48]։ Սակայն, նա միաժամանակ չի ժխտում այն, որ «ախտերը» մարդ ավելի հեշտ է ստանձնում, ձեռք բերում այն ժամանակ, երբ նա իր բնական խառնվածքով հակված է դրան. «Եւ ոչ մի ոք կարծէ զախտից բոլորովին զոյ առանց բնաւորութեան, այլ մեզ այժմ և որ բնականք իսկ են, եղիցին մակստանալիք վասն շատ առաւել զաւրանալոյ չարութեան նսիրսն»[49]։

Ընդհանրապես Իմաստասերը մտածում է, որ բարոյական կամ անբարոյական հատկանիշները ոչ բոլորովին «բնաւորական» են և ոչ բոլորովին «մակստացական», այլ «միջասահման» են, որովհետև, գտնում է նա, եթե բնական լինեին դիցուք առաքինությունները մարդու մեջ, ապա «ոչ թերևս ոք զիւրաւ կարէր մեղանչել կամ արագադարձ յառաքինութեանց առ չարութիւնն զոյ»[50], եթե բնական լինեին մարդու բարոյական հատկանիշները, ապա մարդ չէր կարող ունենալ ձեռք բերովի հատկանիշներ. նա միշտ միանման կլիներ, հնարավոր չէր լինի մարդուն դաստիարակել, մինչդեռ մարդ կարող է, եթե հակված է դրան, ձեռք բերել հատկանիշներ, որոնք նույնքան հաստատուն կարող են լինել, որքան բնականը, այսինքն կարող են բնականի նման դառնալ. «Եւ գիտել արժան է, զի ոչ նուազ ինչ, որ մակրստացականն է, քան զբնութիւնն առնու հաստատութիւն, թէ ունակտպէս տրամադրեսցի»[51]։

Մարդու բարոյական կամ անբարոյական լինելը, ըստ Իմաստասերի, երևան է գալիս մարդու գործունեության ժամանակ, ուստի մարդու բարոյական բնորոշումը կապված է նրա գործունեության հետ և գործերն են բարոյական գնահատման չափանիշը։ Այսպես՝

38 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 777, էջ 129ա։

39 Նույն տեղում, էջ 129բ։

40 Նույն տեղում, էջ 130բ։

41 Նույն տեղում, էջ 131ա։

42 Նույն տեղում, էջ 131ա—131բ։

43 Նույն տեղում, էջ 130ա։

44 Նույն տեղում, էջ 131բ։

45 Նույն տեղում, էջ 130ա։

46 Նույն տեղում, էջ 129ա։

47 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր № 777, էջ 129ա։

48 Ա. Աբրահամյան, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 313։

49 Նույն տեղում, էջ 314։

50 Նույն տեղում։

51 Նույն տեղում։

երբ մարդ ըստ էության չար է, բայց դեռ գործով չի դրսևորել իր չարությունը. «գործով չայտնէ», չարը նրա մեջ «ի կարողութեան վիճակում է՝ «զօրութեամբ չարն կայ ի մարդն. ապա այդպիսի մարդուն դեռ չի կարելի չար համարել, նրան դեռ «բարին առաջնորդէ». Իսկ երբ իր գործունեությամբ մարդը երևան է բերում իր չար հատկանիշը, ապա բարին իր տեղը փոխում է։ Նա գրում է. «քանզի որչափ զօրութեամբ չարն կայ ի մարդն, բայց գործով չայտնէ՝ բարին առաջնորդէ, իսկ յորժամ գործով երևի՝ յայնժամ բարին զիւր խրատն արգելու և զիւր տեղին փոխէ և խոյս տայ ի խնամարկութենէ»[52].

Մարդու բարոյական բնորոշումը տալիս, ասում է Իմաստասերը, չպետք է ելնել մարդու գործունեության եզակի փաստից, որովհետև անհատը ըստ էության բարի լինելով կարող է սխալմամբ չարիք գործել՝ ինքն էլ չգիտակցելով և չցանկանալով այդ. «Երդորոցն յանցանքն ոչ եթէ յառաջախնամ լինի և ապա գործէ, այլ զոր բարի իմանայ կարծելով և ի յայն հանդիպի սխալեալ»[53]. Այն անհատը, որը գիտակցաբար է մեղանչում և չարիք գործում, այդպիսին արժանի է պատժի. իսկ այն, որը իր կամքից անկախ, «ակամա» է չարիքի ու թշվառության պատճառ դառնում, ապա այդպիսին արժանի է ներման. «Որ ակամայ ի թշվառութիւն անկանի՝ ողորմութեան արժանի է, իսկ որ կամաւ մեղանչէ և թշուառանայ՝ չէ արժանի ողորմութեան»[54]. Նա գտնում է, որ «չէ պատեհ գործել զառաքինութիւնն և ի վերայ պարծիլ»[55], այսինքն՝ առաքինի մարդը իր բարոյական արարքների համար չպետք է պարծենա. նա պետք է համեստ լինի։

Հասարակության բարոյական դաստիարակման առումով, Իմաստասերը մեծ տեղ է տալիս հոգևորականությանը։ Նա գտնում է, որ հասարակության համար հոգևոր իշխանությունը նույնքան անհրաժեշտ է, որքան աշխարհիկը։ Հոգևոր իշխանության խնդիրը մարդու հոգևոր պետքերին ծառայելու մեջ է, քանի որ մարդ ոչ միայն մարմնից է բաղկացած, այլև հոգուց. «Զի ոչ ի մարմնոյ միայն մարդ, այլ և ի բանաւոր և ի մտաւոր հոգւոյ կազմեալ հաստատեցաւ, ոչ արժան էր ըստ մարմնոյ ևեթ վերակացութիւն օրինաւորիլ սմա՝ առանց խնամոյ անձնականի»[56]. Հոգևոր հարցերով կոչված է զբաղվել հոգևորական դասը. «Քահանայութեան գործունեութիւն և պատիւ ոչ այլ ինչ, քան զանօրէնութիւն հոգւոց առ ի փրկութիւն ունի դիտաւորութիւն.... Թագաւորութիւն ծառայեցուցանէ զմարմին և իշխէ նիւթականիւ և ապականացուի փրկութիւն, իսկ քահանայութեան յանձն է և խնամ անմահի և անապականելոյ անձինն»[57].

Իմաստասերը, սակայն, քննադատական վերաբերմունք է ցուցաբերում անարժան հոգևորականության նկատմամբ։ Նա պարսավում է այն հոգևորականներին, որոնք չեն գտնվում իրենց արժանի բարձրության վրա, շարաշահում են իրենց դիրքը և կատարում են անազնիվ, անվայել արարքներ։ Հոգևորականների պարտականությունն է, ասում է Իմաստասերը, իրենց ազդեցիկ քարոզներով և անձնական վարքով մաքրել մարդկանց հոգին վատ արարքներից և ցույց տալ մարդկանց բարոյական ուղի, դնել նրանց ճիշտ ճանապարհի վրա։ Մինչդեռ նա ցավով արձանագրում է հակառակ փաստը՝ վշտանալով, որ հոգևորականներից շատերը չեն գտնվում իրենց կոչման բարձրության վրա. «Բայց տեսանեմ զյոլովս և ի կամակար մտօք մահու չափ մեղուցելոց, որոց և յայտնի իսկ են մեղքն»[58]. Նա հատկապես խարազանում է հոգևորականների դրամապաշտությունը. «Ի տան Աստուծոյ կանգնեն կուռս, որպէս զի մի՛ Աստուծոյ, այլ մամոնայի ծառայեցելոց ենն»[59]. Իմաստասերը հանդես է գալիս նաև հոգևորականության տգիտության դեմ, պահանջում է, որ նրանք լուսավորված ու կրթված լինեն։ Նրա պատկերացմամբ, հոգևորականը պետք է լինի բազմակողմանիորեն զարգացած, համալսարան մարդ՝ հասարակության նկատմամբ բազմաթիվ պարտավորություններով։

Հովհաննես Իմաստասերն իր եկեղեցական-կրոնական գործունեությամբ պաշտպանում է Հայ Առաքելական եկեղեցու դավանանքի անաղարտությունը՝ դրա մեջ տեսնելով Հայ եկեղեցու ինքնավարության կարևոր դրավականներից մեկը։ Նա կանգնած էր այն տեսակետի վրա, թե հայ ժողովրդի քաղաքական անկախությունը պահպանելու համար անհրաժեշտ է պահպանել նաև Հայ եկեղեցու անկախությունը։ Նա մտածում էր,

52 Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարան, ձեռագիր N 2595, էջ 255ա։

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում, էջ 274ա։

55 Նույն տեղում, էջ 258բ։

56 «Յովհաննու Սարկաւագ վարդապետի վասն քահանայութեան», «Սոփերք Հայկականք», հատ. Գ, Վենետիկ, 1852, էջ 10։

57 «Սոփերք հայկականք», հատ. Գ, էջ 10—11։

58 Նույն տեղում, էջ 17։

59 Նույն տեղում, էջ 19։

որ հայ ժողովուրդը, որպես քրիստոնեական առանձին դավանանքի պատկանող միավոր, սահմանադատելով իրեն Հույն Եկեղեցուց, այսպիսով պայմաններ է ստեղծում քաղաքական ինքնուրույնության ձգտումը ուժեղացնելու համար։ Կանգնած լինելով այս դիրքերում, նա գաղափարական պայքար էր մղում Քրիստոսի մեջ երկու բնություն դավանողների ուսմունքի դեմ, պաշտպանելով Հայ Եկեղեցու դավանանքը։

Եկեղեցին արժանի բարձրության վրա դնելու նպատակով, Իմաստասերն աշխատում էր բարոյական առումով ազդել հոգևորականության վրա՝ իր աշխատություններում անդրադառնալով այդ հարցերին։ Իմաստասերը ձգտում էր տեսնել հոգևորականների «կատարյալ» դաս, որը անձնական օրինակ կարողանա ծառայել հայ ժողովրդի համար։

Իմաստասերը հանդիսացել է իր ժամանակի եկեղեցական զարգացած գործիչներից մեկը և որպես այդպիսին, ինքն անձամբ ձգտել է ոչ միայն ծառայել Եկեղեցուն, այլև Եկեղեցին ծառայեցնել հասարակությանը։

Հանձին Հովհաննես Իմաստասերի, մեր անցյալի մշակույթը ունեցել է իր լավագույն ներկայացուցիչներից մեկին։



ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ (ՄԻԱԲԱՆ)

(1860—1918)

(Մահվան քառասնամյակի առթիվ)



Համաշխարհային պատերազմը ծանր ու ահարկու հարված հասցրեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը և հիմնովին կործանեց նրա տնտեսական վիճակը, խլեց անթիվ զոհեր։ Դարուվոր մշակույթ, փառավոր պատմություն ունեցող Հայաստան աշխարհը դարձավ «ողբի հայրենիք, որբի հայրենիք», տագնապով համակելով հայ ժողովրդին։

1914—1918 թվականների ընթացքում ընկավ նաև հայ ժողովրդի մշակութային կյանքի թափը ընդհանրապես և ի մասնավորի Ս. Էջմիածնում։ Վերցնենք թեկուզ հայագիտությունը։ Դադարեց «Շողակաթ» մասնագիտական պարբերականը, որից միայն մի համար էր լույս տեսել, հնարավոր չեղավ այլևս շարունակել «Պատմագիրք Հայոց» խոշոր և պատկառելի հրատարակությունը, որի մասին Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանը 1958 թվականի № 4 «Բանբերդ»-ում գրում է. «Հայագիտության համար մեծ նշանակություն ունեցավ «Պատմագիրք Հայոց»-ի գիտական շարքի հրատարակման ուղղությամբ անցյալի մեր նշանավոր բանասերների կողմից կատարված աշխատանքը։ Մանուկ Աբեղյանի, Գայուստ Տեր-Մկրտչյանի, Ստեփան Մալխասյանցի, Ստեփան Կանայանցի, Ս. Հարությունյանի անձնվեր ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ հրատարակել Ղազար Փարպեցու (1904), Ագաթանգեղոսի (1909) և Մովսես Խորենացու (1913) պատմությունների գիտական բնագրերը։

Այդ ժամանակ ծանր և դժվար փոխադրելի էր նաև այն հարվածը, որ մահը հասցրեց Ս. Էջմիածնի մասնագետներին։ 1915 թվականին վախճանվեց Կարապետ Եպիս-

կոպաս Տեր-Մկրտչյանը, 1918 թվականին՝ Միաբանը (Գալուստ Տեր-Մկրտչյան), որոնք եվրոպական մասնագետների մեջ հռչակ ստացած գիտնական հայագետներ էին։ Նույնպես 1918 թվականին վախճանվեց լեզվաբան և մանրանկարչագետ, թարգմանիչ և բանաստեղծ Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը, 1917 թվականին՝ բանասեր Սահակ վարդապետ Ամատունին և ուրիշները։

1958 թվականի հունիս ամսի 13-ին լրացավ Մայր Աթոռի արժանավոր միաբան Գալուստ Տեր-Մկրտչյանի մահվան 40-ամյակը։

ԺԹ դարի 70-ական թվականներից Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը հայոց աշխարհում մի լուսատու փարոս էր։ Այնտեղ էին գալիս Հայաստանի բոլոր գավառներից ու աշխարհի չորս ծագերում ծվարած երիտասարդներ՝ սովորելու և հավատով լցված ու գիտության պաշարով ծանրաբեռնված նվիրվելու Աղդին ու նրա Ս. Եկեղեցուն։

Գևորգյան ճեմարանի անվան հետ են կապված անունները այնպիսի մարդկանց, որոնք իրենց թողած եկեղեցական, պատմաբանասիրական աշխատանքի շնորհիվ անմոռաց տեղ են գրավում մեր մշակույթի պատմության մեջ։ Ճեմարանը հայ աղդին մեծ մարդիկ է տվել, որոնց նպատակը մեկ է եղել, որոնք մկրտված են եղել մի հոգու իմացական ավազանում և տարբեր բնագավառներում ծառայել են միևնույն Աղդին, Հայրենիքին և Եկեղեցուն։

Գալուստ Տեր-Մկրտչյանը իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել է հայ բանասիրության։ Նա թողել է մնայուն աշխատություններ այդ բնագավառում։ Հրատարակել է մի շարք մեծ ու փոքր մատենագիրների գործերը, հանդես է եկել լեզվաբանական և բանասիրական հոդվածներով և թարգմանություններով, հայ և օտար մամուլի մեջ։

Գալուստ Տեր-Մկրտչյանը ծնվել է 1860 թվականին (ըստ Էջմիածնի օրացույցի), Ախալցխայի Մխնուտ գյուղում, որի ժառանգական ծխատեր քահանան էր իր հայրը, Տեր Մկրտիչ քահանան, որն իր ժողովրդի հետ Կարինից գաղթել էր 1829 թվականին։

Գալուստը իր սկզբնական կրթությունն ստացել է Ախալցխայի Կարապետյան ծխական դպրոցում։ Ուսանողության տարիներին փոքրիկ Գալուստը մեծ ընդունակություններ է ցուցաբերում ուսման մեջ, ուստի նրան ուղարկում են Ս. Էջմիածնի նորաբաց Գևորգյան ճեմարանը սովորելու։

Գալուստը լինում է Ճեմարանի առաջին արդեգիրներից մեկը։ Գևորգյան ճեմարանում սովորում է հինգ տարի, ապա տեղափոխվում է Ռիֆֆիսի ներսիսյան հոգևոր քոլեջը։ Լցված գիտությամբ, սնված առաքինությամբ և բազմակողմանիորեն պատրաստված, նա ուսուցչական գործունեության է սկսում դպրոցներում, հատկապես Ախալցխա և Շամախի։ Ապա կատարելագործելու համար իր ուսումը, մեկնում է Փարիզ, հետևելով քաղաքատնտեսության դասընթացների։ Կարճ ժամանակում, իր աշխատասիրությամբ և համեստությամբ կարողանում է համալսարանի վարչության ուշադրությունը և ուսուցչական կազմի սերը գրավել։

Նա հաջողությամբ ավարտում է Փարիզի համալսարանը և գիտության մեծ պաշարով և հայրենասիրական վառ զգացումներով վերադառնում է հայրենիք, ծառայելու իր ժողովրդին։

Հայրենիքում նա հրավիրվում է Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների տեսուչ։ Ուսումնական տարին վերջանալուց հետո, իրականացնելու համար երկար տարիների իր տենչը և բավարարելու համար հոգևորական դառնալու իր հոգեկան պահանջը, դիմում է Մակար կաթողիկոսին՝ ընդունվելու համար Ս. Էջմիածնի միաբանության շարքերը՝ որպես կուսակրոն քահանա։ Ս. Էջմիածնում այդ ժամանակ մի խումբ հավատավոր, նվիրված ու անձնուրաց միաբաններ, վեղարի՝ նվիրական դրահի տակ, մեծ սիրով ու նվիրումով ծառայում էին թե՛ Աստուծուն, թե՛ հայ մշակույթին, թե՛ Հայ Հայրենիքին, հերկելով սիրո և ճշմարտության անդաստանը։ Նրա դիմումը հարգվում է և Գալուստ Տեր-Մկրտչյանը ձեռնադրվում է կուսակրոն և դառնում Մայր Աթոռի միաբան։ Վանք մտնելուց մի տարի հետո նա դժբախտաբար մեջքի կաթված ստանալով ընդմիշտ զրկվում է քայլելու ընդունակությունից։

Ոտանդալից Գալուստին վիճակվեց մնալ ընդմիշտ դպիր, մնալ այն համեստ և իր օրերի մեծահամբավ խուցում, ուր ավելի քան երեսուն տարվա ընթացքում նա այնպես մեծահռչակ կերտեց հայերենի դրականությունը (Մշակ, 1918 թ., № 152, էջ 1)։

Որոշ ժամանակ հետո, բժիշկների խորհրդով, կաթողիկոսական տեղապահ Երեմիա արքեպիսկոպոսը Միաբանին ուղարկում է Փարիզ, ժամանակին հռչակ ունեցող բժիշկ Շարգոյի մոտ։ Նա 1892—1893 թվականներին մնում է Փարիզում, բայց իզուր են անցնում բժիշկների խնամքները։ Գալուստի հիվանդությունը մնում է անբուժելի։ Եվ նա անդամալույծ, ոտները շարժելու ընդունակությունից զուրկ, ապրում է մինչև իր երկրավոր կյանքի վերջին օրը։

Չնայած ֆիզիկական անկարողությունը նրան զրկեց իր ժողովրդի մեջ մնալու, հոգևոր բարձր իդեալների արժանանալու հնարավո-

րությունից, բայց և բարոյական հերոսությամբ այնպես նա կրեց իր խաչը և իր միաբանի զգեստը, և կարողացավ այդ իսկ վիճակում դառնալ բոլորից հարգված պատկառելի գիտուն, Մայր Աթոռի գիտնական միաբանը։

Մայր Աթոռում Միաբանի խուցը եղել է մի հետաքրքիր անկյուն, որտեղ շտապում էին Ս. Էջմիածին եկած բոլոր գիտնականներն ու հայագիտությամբ զբաղվողները։ Մի օր, երբ այցելուներից մեկը խոսում էր նրա գիտական աշխատությունների մասին, նա ասում է. «Ես մեծ պատրաստակամությամբ կտայի իմ բոլոր գիտությունը, կմոռանայի, բացի հայերենից, բոլոր լեզուները, միայն թե հնարավորություն ունենայի ձեզ պես ոտքով մաղ գալ...»։ Այսպես, նա ամեն ոգևնք հանձն առավ իր Ազգի ու Եկեղեցու համար, միշտ մտաբերելով Շնորհալու խոսքը.

«Թէ սատ գործել զգործս Աստուծոյ,
Անդ է հանգչել ընդ Աստուծոյ»։

Ընդհանրապես նա փակված մնաց Ս. Էջմիածնի միաբանական նոր շենքի (Երեմիայի շենք) խուցերից մեկում։ Արմտեղից միայն մի քանի անգամ է դուրս եկել բանտարական շրջագայությունների համար դեպի Սևան, Գեղարդ, Խոր Վիրապ, Մուղնի, Հովհաննավանք։ Իր կյանքի վերջին շրջանում, երբ հիվանդությունը ավելի սուր բնույթ էր ստացել, նա համարյա անկողնուց դուրս չէր գալիս։ Այնուամենայնիվ այդ վիճակում անընդհատ կարդում և գրում էր, ստեղծագործում։

Նա եղել է «Արարատ» ամսագրի խմբագիրը և գործոն մասնակցություն է ունեցել վանքում կազմված դպրոցական, գրական և ազգային հարցերով զբաղվող հանձնաժողովների։

Հիվանդ մարմնով, բայց առողջ հոգով այդ մարդը, տասնյակ տարիներ շարունակ ուսումնասիրել և ստեղծագործել է։ Չնայած նրա դպիր համեստ կոչումին, իր շրջապատում բոլորը նրան դիմում էին «Հայր Գալուստ» կամ «Մարկավագ» անվանելով նրան։ Նա սիրեց միաբանի համեստ աստիճանը և միշտ պարծանքով ստորագրեց Միաբան։

ԺԹ դարում հայագիտական ուսումը մեծ ծավալ ընդունեց ոչ միայն հայկական, այլև նաև մի քանի եվրոպական կենտրոններում։ Այդ ուղղությամբ ամենախոշոր տեղը պատկանում է Ս. Էջմիածնին, որովհետև ԺԹ դարում չկային հայոց երբեմնի հռչակավոր վանքերի նախկին մատենադարանները։ Վանքերից, այդ սուրբ ու լուսատիպ հաստատություններից շատերը, ավերակ էին դարձել, որտեղ երբեմն ծաղկում էր գիտությունը, ուր անձնվեր վանականները, անտեսելով ամեն տեսակի նեղություններ, անձանձրույթ արտագրում, մշակում ու տարածում էին նախնյաց թողած հոգևոր ժառանգությունները։ Մնում էր Էջմիածնի մատենադարանը միայն, որը հեզհետե հարստանում և կազմակերպվում էր, դառնալով հայ և օտար գիտնականների ժամադրավայր։ Մայր Աթոռի հարուստ մատենադարանի դռները բաց էին հայագիտությամբ զբաղվող հայ և օտար բանասերների առաջ։ Ս. Էջմիածինը իր ամենահարուստ հայագիտական ճոխ մատենադարանով, Հոգևոր ճեմարանի որակյալ ուսուցչական կազմով, մասնագիտորեն պատրաստված միաբաններով և իր տպարանով, մտավորական սերտ կապ էր պահպանում այլ ազգերի մատենադարանների և օտար հանրածանոթ հայագետների հետ, որոնք հաճախակի լինում էին Ս. Էջմիածնում։ Եվ հաճախ Միաբանն էր ընդունում նրանց, օգնում, ղեկավարում նրանց աշխատանքը, որպես հմտագույն վարպետ այցելուների որոնած մասնագիտության մեջ։ Այս մասին են վկայում Միաբանի արխիվում գտնվող 420 նամակներ ու գրություններ, ստացված զանազան երկրների հայ և օտար գիտնականներից, պատմաբաններից։

Մի շարք նշանավոր գիտնականներ իրենց մասնագիտության վերաբերյալ գործերով Ս. Էջմիածին այցելելիս, երբ ծանոթանում էին Միաբանի հետ, այնուհետև, իրենց ամբողջ կյանքում Միաբանի հետ կապված էին մնում թղթակցությամբ, ոչ միայն իբրև հմուտ մասնագետի, այլ իբրև մտերիմ բարեկամի և ազնիվ ընկերոջ։ Դրանցից էին Լեմանը, Մեյեն, Մակլերը, Դոմբերգը, ակադեմիկոս Մառը, Լեոն, Հ. Աճառյանը, Կարստը և ուրիշներ։ Այս գիտնականների թվումն է նաև ռուս նշանավոր արևելագետ Մ. Վ. Նիկոլսկին։ Միաբանի արխիվում պահվում են Նիկոլսկու հինգ նամակները գրված Միաբանին։ 1894—1909 թվականների ընթացքում։ Միաբանին ուղղված Նիկոլսկու նամակներում արևելագիտական խնդիրներ են արծարծվում. այդ պատճառով Երևանի Պետական մատենադարանի արխիվային բաժնի վարիչ Ա. Ադամյանը 1950 թվականի Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի № 11 տեղեկագրում հրատարակել է այդ նամակները, մասնագետների ուշադրությանը հանձնելու համար դրանք։

Նիկոլսկին ուղարտական և ասորական արձանագրությունների հմուտ մասնագետ է և նշանավոր արևելագետ։ Օտարազգի շատ ուշագրավ մարդիկ են զբաղվել Հայաստանի հնություններով։ 1893 թվականին Նիկոլսկին, սեպագիր արձանագրությունների որոնման

համար, Մոսկվայի Ճնագիտական ընկերության կողմից, իր գիտական զինակից Ա. Ա. Իվանովսկու հետ, լինում է Հայաստանում և կատարում հատուկ ուսումնասիրություններ։

Միքաթանը երկար տարիներ զբաղվում էր ձեռագրերի ուսումնասիրությամբ։ Նրա աչքի տակով անցել են Ս. Էջմիածնի մատենադարանի բոլոր ձեռագրերը, ինչպես նաև տպված բոլոր հայագիտական նյութերը։ Իր տքնաջան աշխատասիրությամբ և խոր հմտությամբ, նա կարող էր տալ գիտական տեսակետից մնայուն արժեք ներկայացնող գործեր, բայց իր դաժան հիվանդությունը մեծապես արգելակում էր լծվելու մեծածավալ աշխատանքների։ Բայց նրա փոքրիկ հրատարակությունները ևս, որոնց երբեմն կցում էր համառոտ առաջաբաններ, իրենց վրա դասական աշխատանքի կնիք են կրում։ Միքաթանը փոքրուց է սկսել գրելը։ Գրել է ոտանավորներ, նույնիսկ մի վեպ։ Նա հոդվածներ ունի տպված «Մեղու Հայաստանի», «Նոր Դար» և մի շարք այլ պարբերաթերթերում, դեռևս ուսանող եղած ժամանակից։

Ս. Էջմիածին մտնելուց հետո աշխատակցում է «Արարատ»-ին, նույնիսկ որոշ շրջանում լինում է նրա խմբագիրը։ Սկսած 1888 թվականից, «Արարատ»-ի համարներում բազմաթիվ հոդվածներ ու թարգմանություններ ունի Գ. Մ. Միքաթան և Գալուստ Տեր-Մկրտչյան անուններով։

Միքաթանի հրատարակություններն են.

1. «Անանիա Նարեկացի», «Գիր խոստովանութեան», Վաղարշապատ, 1892։
2. «Ուրարտեան բևեռագրերի լեզուն», Վաղարշապատ, 1893, 16 էջ։
3. «Հայկականք» (Ա—ԺԲ), Վաղարշապատ, 1894, 93 էջ։
4. «Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն», Վաղարշապատ, 1896, 84 էջ։
5. «Ցիշատակ դատակնքաց Գորիա և Շմոնի վկայից», Վաղարշապատ, 1896, 91 էջ։
6. «Անանիա Շիրակացի», Վաղարշապատ, 1896։
7. «Հայկականք» (ԺԳ—ԺԹ), Վաղարշապատ, 1899, 102 էջ։
8. «Գիրք հերձուածոց», Վաղարշապատ, 1902, 29 էջ։
9. «Գրիգոր Մանաճիհր Ռաժիկ Միհրան տոհմից», Վաղարշապատ, 1902, 26 էջ։
10. «Ղազար Փարպեցու ձեռագրերը», Թիֆլիս, 1902, 8 էջ։
11. «Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս», Վաղարշապատ, 1902, 42 էջ։
12. «Ստեփանոս Իմաստասէր», Վաղարշապատ, 1902, 35 էջ։
13. «Դաւիթ Հարքացի», Վաղարշապատ, 1903, 43 էջ։
14. «Յովհան Մանդակունի», Վաղարշապատ, 1903, 37 էջ։
15. «Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904 (Ստեփան Մալխասյանի հետ)։
16. «Քննութիւն և համեմատութիւն Եզնիկայ նորագիւտ ձեռագրին», (Հ. Աճառյանի հետ), Վիեննա, 1904, 32 էջ։
17. «1896 թուին Ս. Էջմիածնում գտնուած պղնձեղէն ամանների ցուցակը և արձանագրութիւնները», (օժանդակությամբ Սահակ Վ. Ամատունու), Փարիզ, տպ. «Բանասէր»-ի, 1906, 40 էջ։
18. «Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան հայերէն թարգմանութեան ժամանակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «Նորաբերը» հայ թարգմանութիւնը», Վաղարշապատ, 1908, 28 էջ։
19. Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, (Ստեփան Կանայանի աշխատակցությամբ)։
20. «Վկայք Արևելից», Էջմիածին, 1931 (հետմահու հրատարակություն)։
21. «Պատմութիւն Շապուհոյ Բագրատունւոյ», Էջմիածին, 1921 (հետմահու հրատարակություն)։
22. «Նստոց», դիտողություն ուսուցչապետ Նիկ. Մառի մի նոր հրատարակության առթիւ։ Հինգ նոր արձանագրութիւնք», 12 էջ։

Թարգմանություններ.

1. Ռէկլիւ, Էլիզէ, «Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը, Ուրմիոյ լիճը և առաջաւոր Ասիա», Էջմիածին, 1892։
2. Ռէկլիւ, Էլիզէ, «Լազիստան, Քիւրտիստան, Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջագետք, Ասորիք, Պաղեստին», 1893, 166 էջ։

Միքաթանի արխիվը այժմ պահվում է Երևանի Պետական մատենադարանում։

Միքաթանը վախճանվեց 1918 թվականի հունիսի 13-ին և հունիսի 14-ին նրա աճյունը ամփոփվեց Ս. Էջմիածնի միքաթանական գերեզմանոցում։ Միքաթանը իր հոգու բովանդակ ջերմությամբ սիրեց Հայ եկեղեցին, մեր մշակույթը և աննահանջ սիրով ծառայեց մեր ժողովրդի նվիրական և սուրբ շահերին։ Նա իր գիտությամբ պատիվ բերեց Մայր Աթոռին և իր ժողովրդին։

Հայոց պատմություն, Հայրենի աշխարհ և Հայ Եկեղեցի ներկայանում էին միաբանի հոգուն իբրև մի սուրբ սեղան և նա իր հրավառ սրտով կանգնած էր այդ սրբազան խորանի առաջ, իբրև մի անշեջ կանթեղ։

Վաստակավոր Միաբանի հիշատակը անմոռաց կմնա Ս. Էջմիածնի միաբանության սրտում։ Այսօր Ս. Էջմիածնի միաբանությունը խորին զգացումով, երախտապարտ սրտով ու մեծարանքով հիշում է անունը Միաբանի, Հայր Գալուստի, որը անձնվեր և աղգասեր եռանդով ու իր վաստակով ճշգրիտ հաջորդը հանդիսացավ մեր այն մեծ նախնիների, որոնք «մահկանացու ծնեալ՝ անմահ թողին յիշատակ»։

Մայր Աթոռի այսօրվա համեստ միաբաններս հպարտ ենք Միաբանի կյանքով ու վաստակով և ժառանգորդներն ենք այն հոգևոր ավանդների, որոնց համար ապրեց և ստեղծագործեց Միաբանը, այնքան սիրով և չանսիրությամբ, ինչպես Մայր Աթոռի՝ այլ վաստակավոր և մեծանուն վարդապետները։

Երանի՜ Տերը իր շնորհները մեզ, երիտասարդ միաբաններիս էլ պարգևի, որպեսզի կարողանանք պատվով և սրբությամբ շարունակել նրա կիսավարտ թողած գործը։

Հանգի՜ստ տառապած հոգուդ և հարգա՜նք հիշատակիդ, աղնիվ և ժրաջան մեր Միաբան։

ՍԱՆԴՐՈ ՈՒԱՐԿԱՎԱԳ ՈՒՀԱՐՈՒԴՅԱՆ

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 15-ԱՄՅԱԿԸ.— Դեկտեմբեր ամսին լրացավ Հայաստանի Ակադեմիայի հիմնադրման 15 տարին։ Այդ առթիվ տեղի ունեցած Ակադեմիայի ընդհանուր ժողովում զեկուցումով հանդես եկավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը։ «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան 15 տարուան թեմայով զեկուցում կարդաց ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Հ. Բունիաթյանը, որը նշեց ակադեմիայի ձեռք բերած նվաճումները իր գոյության տարիներին։

Մեղվի վերլուծում ակադեմիկոս Մարտիրոս Սարյանը, ներկաների խանդավառ ծափահարությունների ներքո, ակադեմիկոս Վ. Համբարձումյանին հանձնեց Ամերիկայի (Բոստոնի) Գիտությունների և արվեստների ակադեմիայից ստացված՝ նույն ակադեմիայի պատվավոր անդամի դիպլոմը։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ (ՊԼՈՒԶ) ԳՈՐԾԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ.— Մ. Արեղյանի անվան դրականության ինստիտուտի հրատարակությամբ լույս տեսավ Ա. Սրապյանի «Հովհաննես Երզնկացի (Պլուզ)ա մենագրությունը։

Գիրքն ունի երկու բաժին՝ ա) մենագրական ուսումնասիրություններ հեղինակի անձի, ժամանակի ու գործերի մասին և բ) բնագրեր։

ԺԳ դարի բանաստեղծ և մատենագիր, գիտնական և փիլիսոփա, մանկավարժ և քերականագետ, քարոզիչ և հռետոր Հովհաննես Երզնկացուն նվիրված այս մենագրությունը գրված է Երևանի Պետական Ձեռագրատանը պահպանված փաստական տվյալների վրա, և լույս է սփռում որքան Հովհաննես Երզնկացու, նույնքան էլ իր ժամանակի քաղաքական և դրական կյանքի վրա։ Պակաս արժեք չեն ներկայացնում Երզնկացու աշխարհիկ և հոգևոր բովանդակությամբ ինքնատիպ բանաստեղծությունները։

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ.— Հայաստանի Պետական հրատարակչությունը տպագրության է հանձնել «Հայ-ռուսերեն բառարան»-ը՝ խմբագրությամբ պրոֆեսորներ Ա. Ղարիբյանի, Ե. Տեր-Մինասյանի և Մ. Գևորգյանի։

Բառարանը պարունակում է շուրջ 40 000 գործածական բառ։ Տպագրվում է 30 000 օրինակ տպաքանակով։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՔԱՐՏԵՁ.— Հայկական ՍՍՌ Գեոդեզիայի և քարտեզագրության գլխավոր վարչությունը հրատարակեց Սովետական Հայաստանի վարչա-քաղաքական նոր քարտեզը։

Քարտեզում ցույց են տրվել Հայաստանի բոլոր այքատու բնակավայրերը, հարաբերության գլխավոր ճանապարհները, լճերը և գետերը։

Քարտեզը բազմագույն է։

«ԳՐԱԲԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ».— Դեկտեմբեր ամսին 3 000 օրինակ տպաքանակով լույս տեսավ դոցենտ Աշոտ Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկ»-ի երկրորդ՝ վերափոխված հրատարակությունը։

Ձեռնարկի մեկ մասը նվիրված է գրաբարի քերականությանը։ Ձեռնարկում զետեղված են հատվածներ Փավստոս Բյուզանդի, Եղնիկ Կողբացու, Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի, Թովմա Արծրունու, Գրիգոր Նարեկացու, Արիստակես Լաստիվերտցու գրած ստեղծագործություններից։

Վերջում հեղինակը կազմել է բառարան։

ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ.— Դեկտեմբերի 29-ին Երևանի հասարակայնությունը նշեց հայ բեմի ամենահին վաստակավորներից մեկի, ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստ Ավետ Ավետիսյանի ծննդյան 80-ամյակը և բեմական գործունեության 40-ամյակը։

Հոբելյանական երեկոն տեղի ունեցավ Գ. Սունդուկյանի անվան Պետական դրամատիկական թատրոնում։

Հայաստանի Կուլտուրայի մինիստր Ա. Շահինյանը երեկոն բացեց համառոտ ներածական խոսքով, նա շնորհավորեց հոբելյարին և նրան մաղթեց երկար կյանք և ստեղծագործական հետագա հաջողություններ։

Վերջում բազմաթիվ ողջույնի հեռագրեր ընթերցվեցին, որոնք ուղղված էին բազմագույն հոբելյարին։

Ապա Ա. Ավետիսյանը շնորհակալական շերմ ճառով հանդես եկավ։ Նա շնորհակալական իր խոսքին միացրեց իր բոլոր ուժերը սովետահայ բեմին նվիրելու խոստումը։

Երեկոն փակվեց մի շարք պիեսներից առանձին կտորների ներկայացմամբ, որոնց մասնակցում էր թատրոնի հոբելյարը։

ԱՆՆԱ ՆՇԱՆՅԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ.— 1958 թվականի դեկտեմբերի 18-ին տեղի ունեցավ սփյուռքահայ սիրված երգչուհի Աննա Նշանյանի երաժշտական առաջին ելույթը։ Նա Երևանի Հայֆիլհարմոնիայի բեմից հայ հասարակության համար հանդես եկավ շատ ճոխ հայտագրով, երգչուհին երգում էր երջանիկ հայ ժողովրդի համար։ Դա հուզում և խանդավառում էր նրան։

Ահա թե ինչու նա արեց ավելին, քան այն սովորականը, որ իրեն հաջողվում էր օտար բեմերում։

Գայթակ և լիրիկական նրա սոպրանոն, անկաշկանդ և ուժեղ հուզականությամբ ու անկեղծությամբ թաթավուն, է՛լ ավելի արտահայտիչ ու գեղեցիկ է դարձնում նրա կատարումը։

Երգչուհու երգացանկը ընդգրկում էր Արևմտա-Եվրոպական, ռուսական և հայկական կոմպոզիտորների գործերից ընտիր նմուշներ։

Աննա Նշանյանի համերգը զգալի հաջողություն էր երգչուհու համար։ Նրա ելույթը երկար ժամանակ թարմ կմնա Երևանի երաժշտասեր հասարակայնության հիշողության մեջ։

ՋՈՆ ՄԻԼՏՈՆԻ ԾՆՆԴՅԱՆ 350-ԱՄՅԱԿԸ.— Մայրաքաղաքի հասարակայնությունը, մասնավորը, 1958 թվականի դեկտեմբերի 9-ին շքեղորեն նշեցին անգլիական նշանավոր բանաստեղծ Ջոն Միլտոնի ծննդյան 350-ամյակը։

Միլտոնը անգլիական գրականության փառքերից մեկն է։ Հատկապես նրա «Դրախտ կորուստից»-ը թարգմանվել է շատ վաղուց հայերենի (գրաբար և աշխարհաբար) նրա այլ գործերի հետ։

ՖԻԶՈՒԼԻԻ ՄԱՀՎԱՆ 400-ԱՄՅԱԿԸ.— 1958 թվականի դեկտեմբերին նշվեց միջնադարյան Արևելքի գրական մեծ դեմքերից մեկի՝ Ադրբեջանական ժողովրդի մեծ բանաստեղծ Մուհամեդ Ֆիզուլիի մահվան 400-ամյակը։

Այդ առթիվ լույս տեսավ գրականագետ Ա. Շահսուվարյանի գրքույկը «Ֆիզուլին» վերնագրով, հեղինակի կյանքի և գրական գործունեության մասին։

Ֆիզուլիի հիշատակին երեկույթներ կազմակերպվեցին Հայաստանի Սովետական գրողների միությունում, Գիտական համալսարանում և բարձրագույն ուսումնական այլ հաստատություններում, նվիրված Մուհամեդ Ֆիզուլիի կյանքին և գրական ժառանգության դնահատման հարցերին։

ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՊՈՒՉՉԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ.— Մայրաքաղաքի երաժշտասեր հասարակայնությունը նշեց իտալացի նշանավոր կոմպոզիտոր Ջ. Պուչչինիի ծննդյան 100-ամյակը։ Սովետական երաժշտասեր հասարակայնությունը, որի անբաժան մասն է Հայաստանի երաժշտասեր հասարակայնությունը, լայնորեն ծանոթ է Պուչչինիի ստեղծագործություններին, հատկապես նրա «Բոհեմա»-յին, «Տոսկա»-յին, «Ջիանի-Սկիկի»-ին, որոնց սովետական օպերաների բեմի մնայուն խաղացանկի մասն են կազմում և պահպանում են իրենց սկզբնական թարմությունը, իրենց կյանքի ավելի քան յոթանասուն դարի ընթացքում։

Երաժշտագետ Ա. Թարամյանը զեկուցեց իտալացի կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության մասին։ Զեկուցումից հետո Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր ակադեմիական օպերայի և բալետի Գետական թատրոնի մենակատարների մասնակցությամբ տրվեց համերգ, գլխավորապես Պուչչինիի ստեղծագործություններից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ.— Հունվարի 6-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նիստերի դահլիճում իր աշխատանքն սկսեց Հայաստանի գրողների չորրորդ համագումարը։ Հին և նոր գրողների կողքին տեղ էին բռնել բազմաթիվ հյուրեր։

Համագումարի պատգամավորները և բոլոր ներկաները հոտնկայս հարգում են հանգուցյալ Ա. Խաչակյանի, Դ. Դեմիրճյանի և Ա. Վշտունու հիշատակը։

Համագումարի առաջին նիստում ընդարձակ զեկուցումով հանդես եկավ գրողների միության քարտուղար Է. Թոփչյանը։ Նա հանգամանորեն վերլուծում է ոչ միայն սովետահայ՝ այլև սփյուռքահայ գրականության արդի վիճակն ու զարգացման հեռանկարները։

Հայաստանի սովետական գրողների 4-րդ համագումարը տևեց հունվարի 6—8 օրերը։

Ս. Ա.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ
(1882—1958)

1958 թվականին, դեկտեմբեր ամսի 9-ին, ծանր ու երկարատև հիվանդությունից հետո, իր կյանքի 77 տարում, վախճանվեց Սովետական Միության խոշորագույն գիտնական, հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, աշխարհահռչակ ֆիզիոլոգ ակադեմիկոս Լևոն Արգարի Օրբելին։

Լևոն Արգարի Օրբելին ծնվել է 1882 թվականի հուլիսի 7-ին, Հայկական ՍՍՌ Ախտալի շրջանի Ծաղկաձոր գյուղում։ Միջնակարգ ուսումն ստանալով Թիֆլիսում, Լ. Ա. Օրբելին 1899 թվականին ընդունվում է Պետերբուրգի Ռազմա-բժշկական ակադեմիան, որը փայլուն կերպով ավարտում է 1904 թվականին։ Դեռ ուսանողական տարիներին Լ. Ա. Օրբելին ուշադրություն է դարձնում մեծ ֆիզիոլոգ Իվան Պետրովիչ Պավլովի դասախոսություններով, որը և կանխավճռում է նրա հետագա գիտական գործունեության բախտը։

Վերջացնելով ակադեմիան, Լ. Ա. Օրբելին, Ի. Պ. Պավլովի առաջարկությամբ, գործուղվում է արտասահմանյան մի շարք լաբորատորիաներ, ուր նա աշխատում է հռչակավոր գիտնականների հետ։

1911 թվականին Հայրենիք վերադառնալուց հետո, Լ. Ա. Օրբելին սկսում է աշխատել Պետերբուրգի էքսպերիմենտալ բժշկության ինստիտուտի լաբորատորիայում, հանդիսանալով Ի. Պ. Պավլովի անմիջական օգնականը։

Ի. Պ. Պավլովի մահից հետո, 1936 թվականից ի վեր, Լ. Ա. Օրբելին գլխավորում էր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ի. Պ. Պավլովի անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և բարձրագույն ներվային գործունեության ախտաբանության ինստիտուտը, իսկ 1943 թվականից՝ միաժամանակ նաև Ս. Մ. Կիրովի անվան Ռազմա-բժշկական ակադեմիան։ Լ. Ա. Օրբելին իր շուրջն է համախմբում գիտական տաղանդավոր երիտասարդությանը և ստեղծում ֆիզիոլոգիական խոշոր դպրոց։ Գիտությանը աչքի ընկնող ծառայություններ մատուցելու համար, Լ. Ա. Օրբելին 1935 թվականին ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, 1943 թվականին նա մտնում է Հայկական ՍՍՌ նոր կազմակերպված Գիտությունների ակադեմիայի, իսկ 1944 թվականին՝ ՍՍՌՄ բժշկական գիտությունների ակադեմիայի կազմի մեջ։ Լ. Ա. Օրբելին արտասահմանյան մի շարք գիտությունների ակադեմիաների անդամ էր։



Լ. Ա. Օրբելու անվան հետ է կապված ժամանակակից ֆիզիոլոգիայի հիմնական ուղղությունների ուսումնասիրությունը և պարզաբանումը։

Առանձնապես մեծ են Լ. Ա. Օրբելու ծառայությունները մատերիալիստական էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ստեղծման գործում՝ կապված հայրենական գիտության կորիֆեյներ Ի. Մ. Սեչենովի, Ի. Ի. Մեչնիկովի, Ի. Պ. Պավլովի իդեաների զարգացման հետ։

Լ. Ա. Օրբելու ծառայությունները մեծ են նաև Սովետական Բանակի Ռազմա-Ծովային ուժերի առջև, ռազմական բժշկության և ֆիզիոլոգիայի մի շարք հարցերի պարզաբանման բնագավառում։

Հսկայական աշխատանք է կատարել Լ. Ա. Օրբելին կադրերի պատրաստման գործում։ Նրա բազմաթիվ աշակերտների մեջ կան Սովետական Միության շատ ազգությունների ներկայացուցիչներ։ Անգնահատելի է Լ. Ա. Օրբելու դերը Հայաստանում ֆիզիոլոգիական գիտության կազմակերպման և զարգացման, հատկապես կադրերի պատրաստման, ինչպես նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի կազմակերպման գործում։ Այն հսկայական ժողովրդականությունը, որ վայելում էր Օրբելին, բացատրվում է նրա բացառիկ էներգիայով և հմտությամբ, որ նա դրսևորում էր գիտական աշխատանքների կազմակերպման և ղեկավարման ասպարեզում։

Հայկական և սովետական գիտության զարգացման առջև ունեցած աչքի ընկնող ծառայությունների համար Լ. Ա. Օրբելուն շնորհվել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի, բժշկական ծառայության գեներալ-գնդապետի կոչումներ։ Նա պարգևատրվել է Լենինի չորս շքանշանով և ՍՍՌՄ այլ շքանշաններով։

Մահը խլեց գիտության շարքերից մեր ժամանակի տաղանդավոր և փայլուն մտածողներից մեկին, խոշորագույն գիտնականի, բյուրեղյա մաքրության տեր մարդու։

Հրաժեշտ տվեց կյանքին մեր Հայրենիքի մեծ քաղաքացին։

Լևոն Արզարի Օրբելու պայծառ հիշատակը հավերժ վառ կմնա հայ ժողովրդի սրտում։

ՀԱՆԳՈՒՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՏԹԵՈՍ ՔԱՀԱՆԱ ԳՅՈՒՂԵԼՅԱՆԻ
(1874—1959)

Երկարատև և ծանր հիվանդությունից հետո, հունվարի 2-ին, Երևանում, ի Տեր հանդյավ արժանապատիվ Տ. Մատթեոս քահանա Գյուղելյանը, ալեզարդ հասակում։

Հանգուցյալը ծնվել է 1874 թվականի հունվարի 21-ին, Մուսա լեռան Քեբուսիկ գյուղում, հողագործի ընտանիքում։ Իր նախնական կրթությունն ստացել է գյուղի ծխական դպրոցում, ապա ինքնաշխատությամբ կարողացել է ձեռք բերել հոգևորական առաջարեզի անհրաժեշտ եկեղեցական և ծխական գիտելիքներ։

1911 թվականին նա քահանա է ձեռնադրվում Սսի մայրավանքում։ Այդ օրվանից նա իր համեստ ուժերը, առանց սակարկության, նվիրաբերում է իր եկեղեցուն և ժողովրդին։ Խաչի և Ս. Ավետարանի հետ, իր ձեռքում նա փայփայել է նաև բահն ու բրիչը և իր ապրուստը շահել է իր սիրած հողի մշակությամբ, իր ճակատի արդար քրտինքով։ Իր քաջ և անձնվեր հովիվ, նա եղել է միշտ իր ժողովրդի հետ, հատկապես 1915 թվականի հայկական բռնագաղթի և տեղահանության օրերին։ Հնարավորություն չունենալով Մուսա լեռ բարձրանալ իր ժողովրդի մեծ զանգվածի հետ, իր համագյուղացիների հետ տարագրվել է, կրելով անլույր զրկանքներ և չարչարանք։

Մեծ աղետից հետո վերադարձել է իր ծննդավայրը և նվիրվել է իր հոտի հովվությանը։ Նա իր կոչման գիտակից և պարտաճանաչ հոգևորական էր։ Նա հասնում էր ամեն տեղ, Մուսա լեռան թեկուզ ամենահեռավոր գյուղերը, տանելու համար հոգևոր մխիթարություն իր հավատացյալ և սիրելի ժողովրդին։

1939 թվականին Տ. Մատթեոս քահանան իր ժողովրդի հետ ծննդավայրից տեղափոխվեց Լիբանանի Այնճար բնակավայրը, իսկ 1947 թվականին, իր ժողովրդի գլուխն անցած, եկավ Մայր Հայրենիք։

Հանգուցյալը եղել է անսահմանորեն բարի, ազնիվ, անբասիր և համեստ հովևորական, սիրել է իր ժողովրդին և սիրվել նրանից։

Հունվարի 3-ին, հետմիջօրեի ժամը 2-ին, կատարվեց հանգուցյալի լվացումն ու քահանայաթաղի տան կարգը։ Ապա դագաղը թափորով տարվեց Երևանի Ս. Սարգիս եկեղեցին։

Կիրակի, հունվարի 4-ին, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը պատարագեց Ս. Սարգիս եկեղեցում և կատարեց վերջին օծումը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի բարեհաճ թույլտվությամբ, հանգուցյալի աճյունը փոխադրվեց Ս. Էջմիածին և թաղվեց Ս. Գայանեի վանքում, միաբանության գերեզմանոցում։

Հավիտենական հանգի՞ստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։